ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

ԲԻՈԷԹԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Թ.00.01- «Տեսական փիլիսոփայություն, տրամաբանություն, գիտության փիլիսոփայություն» մասնագիտությամբ
փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ՄԻՐՈՒՄՅԱՆ Ռիմա Արտավազդի

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ՀԱԿՈԲՅԱՆ Իդա Դմիտրիի

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
ՔԱԼԱՇՅԱՆ Արմեն Լորիսի

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՊՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 28-ին ժամը 13^{00}-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի հոգեբանության և փիլիսոփայության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
հոգեբ.գիտ.դոկտոր՝ Կամո Երեմի Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ՝ գիտական առաջընթացը մարդկությունը հարստացրել է նոր գիտելիքներով և տեխնոլոգիաներով: Միևնույն ժամանակ հարուցել է մարդու կյանքին, առողջությանը և բարօրությանը սպառնացող բազմաթիվ ռիսկեր և վտանգներ, որոնք հրատապ են դարձրել գիտության և գիտնականի պատասխանատվության բարձրացման հիմնախնդիրը: Առաջին անգամ գիտնականների և գիտության պատասխանատվության հիմնահարցը շեշտադրվել է Ռասել-Էյնշտեյնի 1955 թվականի հայտնի հուշագրի մեջ: Այն դարձավ Պագուոշյան շարժման մանիֆեստը, որի գաղափարները այնուհետև արտացոլվեցին «Հռոմի ակումբի» զեկույցներում, ինչպես նաև տարբեր հասարակական շարժումների ուղերձներում:

Երկրորդ, բազմաթիվ են այն պատճառները, որոնք գիտության հումանիզացման, գիտնականի պատասխանատվության խնդրաշարը դուրս բերեցին փիլիսոփայական բանավեճերի առաջավոր գիծ: Դրանցից մեկն այն փաստի գիտակցումն է, որ մարդու բարօրությունը, ոչ թե գիտական գիտելիքի զարգացումը պետք է լինի բնագիտության, մասնավորապես՝ կենսաբժշկագիտության զարգացման գլխավոր ազդակը և շարժիչը: Հենց գիտական իմացության հումանիզացման, բնագիտական և հումանիտար արժեքների միջև հավասարակշռության հաստատման ուղիների որոնմանն է ուղղված 20-րդ դարի կեսերին ձևավորված բիոէթիկան: Բիոէթիկան բնավ չի սահմանափակվում գիտության հումանիզացման, գիտության և գիտնականի պատասխանատվության բարձրացման վերաբերյալ դեկլարատիվ հայտարարություններով, այլ անդրադառնում է սերնդագոյացման և գենային թերապիայի, ներառյալ գենոմային հետազոտությունների, ինչպես նաև կյանքի և մահվան սահմանային իրավիճակների և այլ հիմնահարցերի քննական վերլուծությանը:

Երրորդ, բիոէթիկան փորձում է միագումարել իր մեջ բնագիտական և սոցիալ-հումանիտար գիտելիքները, ձևավորել կյանքի և մարդու նկատմամբ բարոյական վերաբերմունքի առանձնահատուկ եղանակ, ինչով բնութագրվում է նրա էթիկական ասպեկտը:

Չորրորդ, բիոէթիկայի հիմնահարցերն ակտիվորեն քննարկվել և քննարկվում են ոչ միայն գիտական, այլև լայն հասարակայնության շրջանակներում: Կենսաբժշկական բարձր տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտությունը հրամայաբար պահանջում է ակտիվացնել երկխոսությունը գիտական հանրույթի և քաղաքացիական հասարակության միջև: Դա անհրաժեշտ է ինչպես գիտության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման, այնպես էլ՝

գիտական նվաճումների պրակտիկ կիրառման, դրանց վերաբերյալ բարոյապես հիմնավորված որոշումների ընդունման համար:

Հինգերորդ, բիոէթիկական թեմատիկայի հրատապության մյուս կարևոր գործոնը հետխորհրդային հասարակություններում կենսաբժշկական գիտության և առողջապահության ոլորտում առաջացած նոր հիմնախնդիրներն են: Հետխորհրդային հասարակություններում, ներառյալ Հայաստանում, ստեղծվել է խիստ անբարենպաստ սոցիալական ֆոն, որը կապված է բժշկության առևտրայնացման, մտածողության, ժամանակակից բժշկության մեջ շուկայական կողմնորոշման տարրերի ուժեղացման և հասարակական կյանքի ընդհանուր ապակայունացման միտումների աճի հետ:

Խնդրո առարկայի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև բժշկության, կենսաբանության և այլ գիտակարգերում էմպիրիկ փորձարարական նյութերի առատությամբ և դրանց փիլիսոփայական ընդհանրացման խիստ անբավարար մակարդակով:

Պայմանավորված է նաև բիոէթիկական հայեցակարգերի համակարգայնացման, ինչպես նաև բիոէթիկական հիմնախնդիրների լուծման ուղիների փիլիսոփայական ուսումնասիրման անհրաժեշտությամբ:

Վերջապես, բիոէթիկայի՝ որպես միջգիտակարգային ուսումնասիրությունների ոլորտի հետագա զարգացումը նշանակալի չափով կախված է գլոբալ գործոններից, առանձնապես տեղեկատվական ցանցերից և տեխնոլոգիաներից: Առողջապահության անվտանգության տեղեկատվական ասպեկտների բիոէթիկական ուսումնասիրության արդիականությունը բխում է դրանց փիլիսոփայական իմաստավորման, ինչպես նաև կենսաբժշկական նորագույն տեխնոլոգիաների ոլորտի արդյունավետ կառավարման ուղիների մշակման մակարդակից:

Հետազոտական թեմայի մշակվածության աստիճանը

Արտասահմանում բիոէթիկային վերաբերող գրականությունը հարուստ է, բազմալեզու, բազմատեսակ: Սակայն բիոէթիկայի և փիլիսոփայության առնչությունների վերաբերյալ հանդիպում ենք հատուկենտ հարցադրումների: Տալով բիոէթիկա գիտակարգի, նրա տիրույթի մեջ մտնող հիմնախնդիրների գիտական մշակվածության ընդհանուր գնահատականը, հարկ է առանձնացնել մի խումբ աշխատանքներ, որոնց հեղինակները ձևակերպել և ուսումնասիրել են բիոէթիկայի հիմնախնդիրները:

Առաջին խումբը ներկայացնում են, նախևառաջ, Վ.Ռ.Պոտտերի, Ա. Հելեգերսի, Տ.Վ. Ռայխի, Խ. Յոնասի, Դ. Գրասիայի և ուրիշների աշխատանքները [Potter V.R.,1971; Хёсле В., 1994; Райх В., 1997; Potter V.R., 1988; Грация Д.,1989; Вильгелм Райх,1997; Ганс Ионас, 1998; Хабермас Ю., 2002; Поттер Ван Ранселер, 2002; Beauchamp T.L., 2003; Грация Д., 2003; Tsai D., 2005;

Engelhardt T.H, Jr., 2006; Swindell J.S., 2007; Режим доступа: http://jme.bmj.eom-/cgi/content/full/31/3/159; Энгельгардт Х.Т., 2008; Энгельгарт Х.Т., 2008]:

Բիոէթիկայի խնդրաշարը նոր հնչողություն է ստանում նաև հայտնի փիլիսոփաներ Մ. Ֆուկոյի, Ֆ. Ֆուկոյամայի և Յու. Հաբերմասի աշխատություններում [Хабермас Ю.,1992; Фуко М., 1998; Фукуяма Ф., 2008]:

Հենց Վ.Ռ. Պոտտերն է առաջինը ներմուծել «բիոէթիկա» հասկացությունը. գիտություն, որն իր մեջ կոչված է միավորելու կենսաբանական գիտելիքները և համամարդկային արժեքները: Առանձնահատուկ հարկ է նշել իտալացի գիտնականներ Է. Սգրեչայի և Վ. Տամբոնեի անունները, որոնք ռուսերեն լեզվով թարգմանված բիոէթիկայի վերաբերյալ առաջին հիմնարար աշխատության հեղինակներն են [Сгречча Э., Тамбоне В., 2001]:

Երկրորդ խումբը կազմում են խորհրդային և հետխորհրդային փիլիսոփաների ուսումնասիրությունները: Դրանցում առանձնանում են հատկապես Ի.Տ. Ֆրոլովի և Բ.Գ. Յուդինի աշխատանքները [Фролов И.Т., 1989; Фролов И.Т.; Юдин Б.Г., 1986; Юдин Б.Г., 2003], որոնք խթանեցին բիոէթիկայի կարգավիճակին, նրա ձևավորման պատճառներին և հասարակական կյանքում բիոէթիկայի դերին նվիրված՝ Լ.Վ. Կոնովալովայի, Տ.Վ. Միշատկինայի, Ա.Պ. Օգուրցովի, Ի.Վ. Սիլույանովայի, Պ.Դ. Տիշչենկոյի և ուրիշների հետազոտությունները [Коновалова Л.В., 1998; Огурцов П.Д., 1994; Силуянова И.В., 1997; Мишаткина Т.В., 2006;Тищенко П.Д., 2008]: Դրանցում բիոէթիկայի ծագումը և զարգացումը հիմնականում կապվում է մարդու մշակութային աշխարհի մեջ կենսատեխնոլոգիաների ակտիվ ներխուժման հիմնահարցի հետ:

Թեև մինչև 1990-ական թթ. «բիոէթիկա» եզրույթը գրեթե հայտնի չէր խորհրդային և հետխորհրդային տարածքում, այդուամենայնիվ այդ թեմատիկայով առաջին հոդվածները երևան են եկել դեռևս 1970թթ.:

Դրա նախադրյալները ծագել են առաջին հերթին ակադեմիկոս Ի.Տ. Ֆրոլովի ջանքերով: 1970-ական թվականներին «Փիլիսոփայության հարցեր» ամսագրում նրա կազմակերպած «կլոր սեղաններ»-ի, թեմատիկան բազմազան էր: 1973թ. անցկացվեց «կլոր սեղան»՝ «Գիտությունը, էթիկան, հումանիզմը» թեմայով (№ 6, 8):

Առաջին անգամ ԽՍՀՄ-ում առաջադրվեցին գիտության էթիկայի, գիտական իմացության հետազոտական և արժեբանական կողմերի հարաբերակցության հիմնահարցերը: Ֆրոլովի կողմից առաջին անգամ ընդգծվեց, որ գիտության ժամանակակից ըմբռնումը պետք է գիտության ենթատեքստի մեջ ներառի բարոյական հիմնահարցերը, բարոյական գնահատականը, մինչդեռ գիտության ավանդական ըմբռնումը էթիկականը փակագծերից դուրս է հանում [Фролов, И.Т., 2008; Юдин Б.Г., 2003; Этико-правовые аспекты проекта «Геном человека». Международные документы и аналитические материалы, 1998]:

1990-ական թթ. ի վեր բիոէթիկային նվիրված լուրջ հրապարակումները կապված են ՌՖ ԳԱ թղթակից անդամ, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր այսօր արդեն Ռուսաստանի բիոէթիկական մտքի դասական համարվող Բ.Գ.Յուդինի աշխատանքների հետ: Նա բիոէթիկան դիտարկում է որպես գիտական իմացության միջառարկայական ոլորտ, որը հետազոտում է բարոյական և սոցիալական հիմնախնդիրներ, որոնք հարուցված են կենսաբժշկական տեխնոլոգիաներով:

Բիոէթիկայի փիլիսոփայական հիմքերը բացահայտվում են միջազգային ճանաչում ունեցող Վ.Գ. Բորզենկովի, Ի.Վ. Սիլոյանովայի, Ի.Ն. Սմիրնովի, Պ.Դ. Տիշչենկոյի, Ն.Ն. Սեդովայի և ուրիշների աշխատանքներում [Юдин Б.Г., 2008; Тищенко П.Д., 2001; Тищенко П.Д., 2004; Седова Н.Н., Сергеева Н.В., 2010]:

Բիոէթիկան սերտորեն կապված է գիտության էթիկայի և կիրառական էթիկայի հետ: Փիլիսոփայության և այդ ոլորտների կապի մեթոդաբանական հարցերին են նվիրված Յու.Գ. Վոլկովի, Պ.Պ. Գայդենկոյի, Ն.Լ. Գինդիլիսի, Լ.Պ. Կիյաշչենկոյի և ուրիշների աշխատանքները [Гайденко П.П., 1997; Гиндилис Н.Л., 1999; Волков Ю. Г., 2000; Киященко Л.П., 2005]:

Բիոէթիկան որպես միջգիտակարգային ուսումնասիրությունների նոր բնագավառ, նախևառաջ, կողմնորոշված է դեպի մարդը, որը բարոյական այն սուբյեկտն է, որի վերաբերմունքը աշխարհի, կենդանի բնության, ինքն իր նկատմամբ, հենց բիոէթիկական ուսումնասիրությունների գլխավոր առարկան է: Միջառարկայական ենթատեքստում մարդու ուսումնասիրությանն են նվիրված Վ. Բորզենկովի, Յ.Ա. Միլներ-Իրինինի, Վ. Կուվակինի և ուրիշների աշխատությունները [Кувакин В.,1998; Борзенков В.Г., 1999; Мильнер-Иринин Я.А., 1999]:

Ատենախոսության թեմայի ենթատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում գլոբալ էթիկայի, կյանքի հանդեպ երկյուղածության էթիկայի ձևավորման հարցերը, որոնք անմիջականորեն առնչվում են բիոէթիկայի հիմնահարցերի հետ: Դրանք առկա են Ա. Շվեյցերի, Ա.Վ. Նազարչուկի և ուրիշների աշխատանքներում [Швейцер А., 1992; Назаретян А.П., 2001; Назарчук А.В., 2002]:

Այդուհանդերձ, հարկ է նկատել, որ տեսական բիոէթիկայի գծով հիմնարար աշխատանքների թիվը խիստ անբավարար է:

Հայաստանի Հանրապետությունում բիոէթիկայի՝ որպես փիլիսոփայական նոր գիտաճյուղի ամբողջական հիմնավորման և ներկայացման առաջին փորձը ատենախոսի «Բիոէթիկա» աշխատանքն է, որը ՀՀ կրթության և գիտության նախարարության 27.02.09 թիվ 134-Ա/ք հրամանով հաստատվել է որպես դասագիրք բժշկական բուհերի ուսանողների համար (2009): Այնուհետև հրատարակվել են «Bioethics» (2013) և «Биоэтика» (2013) ուսումնական ձեռնարկները, «Բիոէթիկայի ներածություն» մենագրությունը (2012), համապատաս-

խան հոդվածներն ու հրապարակումները արտասահմանյան և տեղական պարբերական մամուլում [Դավթյան Ս.Հ., 2012; Davtyan S.H., 2012; Давтян С.А., 2013; Davtyan S.H., 2013; Davtyan S., Khachatryan M., 2014]:

2012 թվականին ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Մ. Բոյաջյանի խմբագրությամբ լույս է տեսցնում «Կենսաէթիկայի ներածություն» աշխատությունը Լ.Ս. Ներսեսովայի, Ս.Ա. Մկրտչյանի, Ս.Ա. Խաչատրյանի հեղինակությամբ: Ուսումնական այս ձեռնարկը կենսաբանության, կենսատեխնոլոգիայի և կենսաբժշկության բնագավառների ուսանողների, ասպիրանտների և գիտական աշխատողների ուշադրությանն է ներկայացնում բիոէթիկայի հիմունքների համառոտ շարադրանքը հայերեն և ռուսերեն լեզուներով: Այն գրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2008թ.-ին մշակված բիոէթիկայի բազային ծրագրի համաձայն: Դիտարկվող բիոէթիկական խնդիրների քննարկումը ներկայացված է կենսաբանության, մարդաբանության և էթիկայի միջև երկխոսության ձևով, ինչը հեղինակների կարծիքով համապատասխանում է ուսումնասիրման բիոէթիկական մեթոդին (Ներսեսովա Լ.Ս., 2012):

Հիշատակության արժանի են «Բիոէթիկայի զարգացման ընկերություն» հասարակական կազմակերպության (նախագահ՝ Կ. Ղազարյան) հրատարակած 3 բրոշյուրները և 2011թ-ին ՀՀ Բիոէթիկայի ազգային կենտրոնի նախաձեռնությամբ թարգմանված Բ.Գ. Յուդինի և Պ.Տ. Տիշչենկոյի «Բիոէթիկա. հարցեր և պատասխաններ» բրոշյուրը (Ի. Մադոյանի մասնագիտական խմբագրությամբ):

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն գործունեությունը, որ ծավալել է ԲՍՀՀ-ի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Ռ.Ս. Հովհաննիսյանը՝ բիոէթիկայի գաղափարները ՀՀ-ում ներդնելու գործում: Մասնավորապես, «Բժշկական սեղմագրերի հայկական հանդեսի» (ԲՍՀՀ) 2004թ. թիվ 3-ը ամբողջությամբ նվիրվել է բժշկական բարոյագիտության և կենսաբարոյագիտության խնդիրներին: Հանդեսում տեղ են գտել Ռ.Ա. Հովհաննիսյանի, Գ.Լ. Ասլանյանի, Տ.Մ. Հախվերդյանի, Մ.Կ. Բախշինյանի, Կ.Տ. Ղազարյանի, Վ.Ս. Քեշիշյանի, Ս.Հ. Դավթյանի, Ա.Ե. Շիրինյանի հոդվածները հայրենական բժշկագիտության և գործնական առողջապահության բարոյագիտական հայեցակարգերի շուրջ: Ինչպես նշվում է վերոնշյալ հանդեսում, աշխարհի շուրջ 4.000 բժշկական ամսագրերի տեղեկատվությունը ներկայացնող ԱՄՆ բժշկական ազգային գրադարանի տվյալներով 1996-1999թթ. ժամանակահատվածում հրապարակվել են բժշկական բարոյագիտության հարցերին նվիրված 8488 հոդված:

Մինչդեռ 1999-2004թթ. և հետագա ժամանակահատվածում հայրենական գիտաբժշկական ամսագրերը ամփոփելիս, մենք ցավոք, չգտանք բժշկական բարոյագիտությանը և բիոէթիկային նվիրված որևէ հոդված [ավելի հանգա-

մանորեն տե՛ս, Բժշկական սեղմագրերի հայկական հանդես, Երևան, 2004, № 4]:

Վերջին տարիներին բիոէթիկայի, նրա հիմնախնդիրների վերլուծության նկատմամբ ոչ պակաս հետաքրքրություն են ցուցաբերել նաև հոգևոր գործիչ-ները: Ժամանակակից աշխարհում քրիստոնեության առջև նոր մարտահրավեր-ներ են ծառացել, որոնք քրիստոնեական ժառանգության հանդեպ նոր մոտեցում են պահանջում: Ողջունելի է, որ այս իրադրությունից անմասն չի մնացել նաև Հայ եկեղեցին, որի հովվական առաքելությունը պահանջում է արձագանքել կյանքի փոփոխություններին և զերծ մնալ մեկուսացման ու կղզիացման փոր-ձությունից: Արդի կարևորագույն մարտահրավերներից է բժշկության և կենսա-բանական տեխնոլոգիաների ոլորտներից բխող բարոյագիտական հիմնա-խնդիրների լուծումը՝ ըստ քրիստոնեական հիմնարար արժեքների: Այս հարցերի պարզաբանմանն է նվիրված Գևորգ Աբղ. Սարոյանի (ներկայումս՝ Գ. Սրբ. Սարոյան), Հրաչ Սրկգ. Սարգիսյանի և այլոց կազմած և խմբագրած աշ-խատանքը՝ Կենսաէթիկայի հիմնահարցեր Ուսումնաօժանդակ ձեռնարկ, [2015թ.]:

Չնայած ԱՊՀ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, բիոէթիկայի խնդիրների նկատմամբ աճող հետաքրքրությանը և դրանց ուսումնասիրության ասպարեզում նաև հայ հետազոտողների որոշ ձեռքբերումներին, այնուամենա-յնիվ մեզանում բիոէթիկայի հիմնախնդիրները դեռևս չեն դարձել փիլիսո-փայական և գիտական ուսումնասիրությունների առարկա:

Մեզանում չկան հետխորհրդային բարդ և հակասական փոխակերպում-ների պայմաններում բիոէթիկայի փիլիսոփայական, սոցիոլոգիական, իրա-վաբանական, բարոյագիտական, բժշկագիտական ասպեկտներին նվիրված ամփոփ ուսումնասիրություններ:

Չպարզված են մնում բիոէթիկական հիմնախնդիրների վրա կենսա-բժշկական նոր տեխնոլոգիաների ազդեցության հնարավորությունների և սահ-մանների ուսումնասիրության մեթոդաբանական և աշխարհայացքային հարցե-րը:

Լուծման կարոտ են բիոէթիկական հիմնախնդիրների լուծման մեղմաց-ման կամ հաղթահարման ռազմավարական ուղիների մշակման հարցերը:

Ամբողջությամբ վերցրած, վերոնշյալ հանգամանքները ներկայացնում են գիտական լուրջ հիմնախնդիր, որն առանձնահատուկ ուսումնասիրություն է պա-հանջում՝ որոշարկելով սույն ատենախոսության թեման՝ բիոէթիկայի հիմնա-խնդիրների փիլիսոփայական վերլուծությունը:

Հետազոտության օբյեկտը՝ բիոէթիկայի հիմնախնդիրներն են որպես միջառարկայական հետազոտությունների ոլորտ, ինչպես նաև, բիոէթիկան՝ որ-

պես նոր գիտակարգ, կենսաբժշկագիտական, կենսաբժշկագիտության և համամարդկային արժեքների հատման կետ:

Հետազոտության առարկան՝ բիոէթիկայի փիլիսոփայական հիմքերն են, ինչպես նաև փիլիսոփայություն-բիոէթիկա առնչությունները, որոնք արտացոլված են բիոէթիկական տեսությունների, մոդելների, հայեցակարգերի և սկզբունքների մեջ, ինչպես նաև հոգեբանական, աստվածաբանական, իրավաբանական, կենսաբժշկական, փիլիսոփայական, սոցիոլոգիական այն հրապարակումներում, որոնք անդրադառնում են բիոէթիկայի սկզբունքների կիրառման ամենատարբեր ասպեկտներին:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակն է բիոէթիկայի՝ որպես գիտելիքի միջգիտակարգային բնագավառի առանձնահատկությունների բացահայտումը, փիլիսոփայության և բիոէթիկայի փոխադարձ կապի հիմնավորումը: Հետազոտության նպատակն է՝ քննարկել, բացահայտել բիոէթիկայի մի շարք սկզբունքների փիլիսոփայական էությունը, հիմնավորել դրանց մեթոդաբանական դերը բիոէթիկական հետազոտությունների գործընթացում, հիմնավորել փիլիսոփայական գիտելիքի գործադրելիությունը բիոէթիկայի պրակտիկ, առօրյա խնդիրների լուծման մեջ:

Այդ նպատակով առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- որոշակիացնել բիոէթիկայի ծագման գիտափիլիսոփայական և էթիկական հիմքերը, դրանց մեկնաբանման առանձնահատկությունները փիլիսոփայական մտքի պատմության մեջ,
- վեր հանել բիոէթիկական գիտելիքի աշխարհայացքային և արժեբանական հիմքերը,
- բացահայտել և քննադատորեն վերլուծել բիոէթիկայի դերը նորագույն կենսաբժշկական տեխնոլոգիաների սոցիալական հետևանքների իմաստավորման ոլորտում, դրա հիման վրա մշակել նոր կենսատեխնոլոգիաների հումանիտար փորձաքննության, ստանդարտների ստեղծման ու կիրառման սկզբունքները,
- բացահայտել մարդու ինքնավարության նկատմամբ հարգանքի և մի շարք այլ սկզբունքների փիլիսոփայական էությունը, որոնք կոչված են ապահովելու այդ ինքնավարությունը պրակտիկայում,
- վերլուծել և հիմնավորել բիոէթիկայի դերը ժամանակակից քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների՝ նոր հարացույցի, բիոէթիկական մտածողության նոր տիպի ձևավորման գործում,
- վեր հանել Հայաստանում բիոէթիկայի կայացման առանձնահատկությունները,
- բացահայտել և քննադատորեն վերլուծել էֆթանազիայի հետ առնչվող հիմնախնդիրները՝ պատմափիլիսոփայական, կրոնամշակութային և սոցիոլոգիական ուսումնասիրությունների համատեքստում,

- վերլուծել պալիատիվ բժշկության փիլիսոփայական հիմքերը և դրա հիման վրա բացահայտել Հայաստանում «հոսփիսային շարժման» ձևավորման և զարգացման պայմաններն ու ուղիները:

- հիմնավորել և սահմանել բիոէթիկական հիմնահարցերի հումանիտար փորձաքննության մշտադիտարկման /մոնիտորինգի/ սկզբունքները:

- վերլուծել բիոէթիկայի հիմնախնդիրների և սկզբունքների փիլիսոփայական էությունը, ներկայացնելով բիոէթիկան որպես պրակտիկ փիլիսոփայության նոր տիպ, որպես ազգամշակութային երևույթ, որպես երկխոսություն:

Ատենախոսության տեսական աղբյուրները և մեթոդաբանական հիմքերը:

Հետազոտության տեսական աղբյուրները կազմում են, առաջին հերթին, բիոէթիկայի դասականների (Պոտտեր, Հելեգերս, Բիչամպ, Չայլդրես, Էնգելհարտ և այլք) աշխատությունները: Երկրորդը, Ի.Տ. Ֆրոլովի և Բ.Գ. Յուդինի աշխատությունները, որոնցում զարգացված բիոէթիկայի՝ որպես նոր գիտակարգի տեսությունը նշանակալի չափով ազդել է հետխորհրդային փիլիսոփայության մեջ բիոէթիկայի հայեցակարգերի ձևավորման վրա: Դա առաջին հերթին վերաբերում է Ի.Վ. Սիլույանովայի, Ա.Յա. Իվանուշկինի, Ի.Ն. Սմիռնովի, Ն.Ն. Սեդովայի, Ա.Պ. Օգուրցովի, Պ.Դ. Տիշչենկոյի և ուրիշների աշխատություններին:

Հետազոտության տեսական հիմքերից մեկը փիլիսոփայական միտքն է՝ իր պատմական զարգացման մեջ, մյուսը՝ բիոէթիկայի հայեցակարգերն են:

Իր հետազոտության մեջ հեղինակը հենվել է զարգացման, աշխարհի նյութական միասնության ու ամբողջականության, պատմականության փիլիսոփայական սկզբունքների վրա:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը համագիտական և փիլիսոփայական վերլուծության, հետահայաց, դիալեկտիկական, համակարգային, համեմատական, տրամաբանական վերլուծության մեթոդներն են:

Հետազոտական հարացույցի կենտրոնական տարրը միջգիտակարգային մոտեցումն է, որը թույլ է տալիս՝ օգտագործելով բնագիտական և հումանիտար գիտությունների տվյալները, համարժեք արտացոլել բիոէթիկայի էությունը և կայացման բարդ ու հակասական գործընթացը:

Աշխատանքում կիրառվել են ընդհանուր գիտական և հատուկ գիտական մեթոդներ՝ համանմանության և համադրման,համեմատության, ինչպես նաև բիոէթիկական փաստերի ու տվյալների սոցիոլոգիական վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը

- Առաջին անգամ վերլուծվել են բիոէթիկայի փիլիսոփայական հիմքերը, բիոէթիկան ներկայացվել է որպես գիտելիքի միջգիտակարգային հետազոտությունների նոր բնագավառ և պրակտիկ փիլիսոփայության նոր տիպ:

- Բիոէթիկայի կայացման գործընթացի վերլուծության հիման վրա բացահայտվել են նրա հիմնախնդիրների, հիմնարար սկզբունքների աշխարհայացքային և արժեբանական հիմքերը,

- Բացահայտվել և հիմնավորվել է բիոէթիկայի դերը նորագույն կենսատեխնոլոգիաների կիրառման սոցիալական հետևանքների տեսական իմաստավորման մեջ:

- Դրա հիման վրա հստակեցվել են նոր կենսաբժշկական տեխնոլոգիաների հումանիտար փորձաքննության սկզբունքները:

- Վերլուծվել է անհատի ինքնավարության նկատմամբ հարգանքի սկզբունքը:

- Հիմնավորվել է արդի քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների նկատմամբ մտածողության նոր տիպի ձևավորման գործում բիոէթիկայի կարևոր դերը:

- Բացահայտվել են Հայաստանում բիոէթիկայի կայացման սոցիոմշակութային առանձնահատկությունները:

- Վերլուծվել է էֆթանազիայի հիմնախնդիրը՝ հայրենի կրոնական և փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

- Վերլուծվել և հիմնավորվել են ամոքիչ (պալիատիվ) բժշկության բարոյափիլիսոփայական հիմքերը, հստակեցվել են «հոսպիսային շարժման» ձևավորման և զարգացման նախադրյալները Հայաստանում:

- Մշակվել և հիմնավորվել են բիոէթիկական հիմնահարցերի հումանիտար փորձաքննության, ստանդարտների ներմուծման սկզբունքները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը

Ատենախոսության տեսական նշանակությունը որոշվում է, նախևառաջ, նրա մեթոդաբանական ուղղվածությամբ: Հետազոտության մեջ ստացված արդյունքները թույլ են տալիս հստակեցնել բիոէթիկայի՝ որպես միջգիտակարգային գիտելիքի առանձնահատուկ բնագավառի նկատմամբ մոտեցումները, որոնք համախմբված են մարդու հիմնախնդիրների շուրջ: Այդ արդյունքները լիիրավ կարող են օգտագործվել Հայաստանում բիոէթիկայի հիմնահարցերի հետագա ուսումնասիրությունների համար:

- Բազմաթիվ են այն գործնական պատճառները, որոնք բիոէթիկական խնդրաշարը դուրս բերեցին փիլիսոփայական բանավեճերի առաջավոր գիծ: Դրանցից մեկն էլ այն ո՛չ պակաս կարևոր հիմնահարցի գիտակցումն է, թե ինչպիսին պետք է լինի բժշկական և կենսաբանական կրթությունը արդի պայմաններում:
- Ո՞րն է ապագա մասնագետների (կենսաբանների, բժիշկների, կենսատեխնոլոգների) հումանիտար, և մասնավորապես, փիլիսոփայական պատրաստման դերն այդ գործընթացում: Ինչպե՞ս հասնել բնագիտական և հումա-

նիտար գիտակարգերի զուգամերձության (կոնվերգենցիայի): Ակներև է, որ դա բարդ խնդիր է: Մասնավորապես, ոմանք ուշադրությունը սևեռում են բժշկության վրա՝ բարոյագիտությանը հատկացնելով լոկ գործիքային նշանակություն (Հոպ, Լորի, Մասոն և այլք): Որոշ փորձագետներ էլ (Տ.Վ. Միշատկինա, Թ.Ն. Ցիրդյա և այլք) գտնում են, որ «մեր հասարակության փոխակերպման և տարիներ շարունակ ձևավորված և կարծրատիպ դարձած մտածողության ու արժեքների վերագնահատման պայմաններում բիոէթիկան այն հումանիտար առարկան է, որ կարող է բազային կրթական դիսցիպլինի դեր ստանձնել բժիշկների և կենսաբանական մասնագիտությունների տեր յուրաքանչյուր ուսանողի համար»: Մյուսները լուծում են զուտ դեոնտոլոգիական խնդիրներ, երրորդները պարզապես ձևակերպում են ինչ-ինչ անվանումներ՝ «դեոնտոլոգիական էթիկա», «բժշկական էթիկա» և այլն, և այլն (Լ.Ս. Ներսեսովա, Զ.Ա. Խաչատրյան և այլք):

Մեր տեսական և փիլիսոփայական վերլուծությունների հետևությունն այն է, որ այդ տարընթերցումների վերացումը հնարավոր է ինչպես փիլիսոփայության դասընթացի՝ հատկապես բարոյագիտության բժշկակենսաբանական մասնագիտացման, այնպես էլ՝ կենսաբժշկական կրթության հումանիտար և բարոյագիտական «հագեցվածության» ուժեղացման միջոցով:

- Մեր վերլուծությունները բերում են նաև այն կարևոր գործնական եզրակացության, որ ուսումնական գործընթացում բիոէթիկայի խնդիրը ոչ միայն բարոյական նորմերի բեկման, փոխակերպման պարզ նկարագրությունն է, այլև դրանց իրացման ուղիների հայտնաբերումը պրակտիկայում, կոնկրետ իրավիճակներում:

Միանգամայն ակներև է, որ բիոէթիկայի ճանաչողական գործառույթը բարոյական արժեքների, սկզբունքների տեղափոխումն է իդեալական, մտահայեցողական ոլորտից գործնական, կիրառական ոլորտ:

- Բիոէթիկա առարկայի դասավանդման միջազգային փորձի և Հայաստանի Հանրապետությունում դասավանդման 16 տարիների պրակտիկայի ուսումնասիրությունը ատենախոսին բերել է այն եզրակացության, որ անհրաժեշտ է կենսաբաններին, կենսատեխնոլոգներին, բժիշկներին, հետազոտողփորձարկողներին, ինչպես նաև աստվածաբաններին, սոցիոլոգներին, իրավաբաններին, հոգեբաններին ծանոթացնել ոչ միայն բիոէթիկայի հիմնական սկզբունքների և խնդիրների հետ, այլև նրանց մոտ մշակել կյանքի, բժշկության և առողջապահության մասին գիտություններին առնչվող բարոյագիտական խնդիրների բացահայտման, դրանց բարոյագիտական հանգուցալուծում տալու և այն փիլիսոփայորեն հիմնավորելու հմտություններ ու կարողություններ:

Հենց այդ նպատակներն էլ պայմանավորել են ատենախոսության կառուցման տրամաբանությունը:

Գործնական նշանակությունը կապված է նաև այն բանի հետ, որ ատենախոսության եզրակացությունները՝

ա) հասարակության ուշադրությունը կենտրոնացնում են այն հիմնախնդիրների վրա, որոնք կապված են նորագույն գիտաբժշկական հայտնագործությունների հետ,

բ) մղում են վերոնշյալ հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծումների որոնումների,

գ) բովանդակում են սոցիալական, էթիկական, իրավական, փիլիսոփայական և այլ գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են կենսաբժշկության և առողջապահության ոլորտում չարաշահումներին և խախտումներին խելամտորեն հակազդելու և բիոէթիկական գիտակցության, վարքի զարգացման ու կառավարման արդյունավետ մարտավարություն մշակելու համար,

դ) նպաստում են հասարակական և ազգային գիտակցության մեջ մարդու կյանքի և առողջության նկատմամբ սթափ վերաբերմունքի մշակմանը:

Ատենախոսական ուսումնասիրության հիմնական դրույթները և եզրակացությունները կարող են օգտագործվել փիլիսոփայության պատմության, գիտության փիլիսոփայության և մեթոդաբանության, էթիկայի և բիոէթիկայի դասընթացների, ինչպես նաև բիոէթիկայի առանձին հիմնախնդիրներին նվիրված հատուկ դասընթացների մշակման համար:

Հետազոտության նյութերը և արդյունքները կարող են լայնորեն օգտագործվել նաև բիոէթիկական հիմնախնդիրների հումանիտար փորձաքննության բնագավառում: Վերջապես, Հայաստանի գիտական հանրույթի և հասարակական լայն շրջանակների ուշադրությունը սևեռում են արդի բժշկական, կենսաբանական կրթության նոր ծրագրի մշակման, դրանում բիոէթիկայի և գիտության փիլիսոփայության դերի և նշանակության բարձրացման հրատապ հիմնահարցերի վրա:

Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հեղինակային հրապարակումները

2005թ. հոկտեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունեց բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին հռչակագիր:

Բիոէթիկայի պատմության մեջ առաջին անգամ ՄԱԿ-ի անդամ պետությունները և միջազգային հանրությունը պարտավորվեցին մեկ միասնական համատեքստում հարգել և իրագործել փաստաթղթում հռչակած բիոէթիկայի հիմնական սկզբունքները: Հռչակագիրը վերաբերում է բժշկության, կյանքի մասին գիտությունների և դրանց առնչվող տեխնոլոգիաների բարոյագիտական հարցերին, առաջնորդվելով այն սկզբունքներով, որոնք ապահովում են մարդու արժանապատվության և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբեր-

մունք: Հռչակագիրը դրանով իսկ հաստատում է մարդու իրավունքների և էթիկական նորմերի փոխադարձ կապն ու փոխազդեցությունը:

2008թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտության և տեխնոլոգիաների էթիկայի բաժանմունքը մշակեց և ներկայացրեց Բիոէթիկայի բազային ուսումնական ծրագիր, որը փորձարկելու համար 2010թ. նոյեմբերի 23-ին Համաձայնագիր (Մեմորանդում) կնքվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մոսկվայի գրասենյակի (Դենդեւ Բադարչ) և Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (Սուսաննա Դավթյան) միջև:

Մինչ ատենախոսի հետ համաձայնագիր կնքելը ՅՈՒՆԵՍԿՕ-ն համաձայնագիր էր կնքել Ռուսաստանի (Մոսկվա, Կազան), Բելոռուսի (Մինսկ) հետ, ելնելով այն փաստից, որ այստեղ աշխատում են միջազգային ճանաչում ունեցող, ազգային լեզվով դասագրքեր հրատարակած փորձագետներ (Բ.Գ. Յուդին, Ա.Բ. Աբրոսիմովա, Տ.Վ. Միշատկինա), որոնք պետք է իրականացնեին հիշյալ ծրագրի փորձարկումը: Այսպիսով, առանց կեղծ համեստության կարելի է նշել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն հետխորհրդային տարածքում երրորդ համաձայնագիրը կնքեց Հայաստանի՝ ԵրՊԲՀ-ի հետ:

Լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնի (Հայֆա) հայկական մասնաճյուղի վարիչ (24.05.2009թ.-ից), Բիոէթիկայի Միջազգային գիտական կոմիտեի անդամ (2011թ.-ից), և կնքելով համաձայնագիր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ, պարտավորված եմ ատենախոսության մեջ ներկայացնելու Հռչակագրի սկզբունքներին, դրանց ուսումնասիրման նպատակներին, մեթոդներին, ուսումնական ծրագրի առավելություններին, թերություններին ու այն կատարելագործելու համար հնարավոր առաջարկներին վերաբերող դատողություններ, որոնցից մի մասը տպագրվեց որպես առաջատար հոդված «Բժշկություն և իրավունք» միջազգային ամսագրում [Davtyan S.H., 2012]:

Սույն մտադրությունը հռչակագրի նպատակների իրագործման միջոցներից մեկն է, որն առաջարկում է մարդկանց օգտվել գիտության ու տեխնիկայի նվաճումներից միայն այն դեպքում, երբ հարգվում են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները:

Դրա վկայությունն է նաև այն փաստը, որ ատենախոսի “Bioethics” և “Биоэтика” ուսումնական ձեռնարկները, ինչպես նաև միջազգային հեղինակավոր ամսագրերում տպագրված հրապարակումները ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի կողմից, ինչպես նաև բիոէթիկայի բնագավառում միջազգային համբավ, բարձր վարկանիշ ու հեղինակություն ունեցող մասնագետների կողմից գնահատվել են որպես «Հայաստանի գիտական աշխարհում ժամանակին ու տեղին կատարված կարևոր և լուրջ ներդրում» [Давтян С.А., 2007; Давтян С.А., 2011; Давтян С.А., 2012; Давтян С.А., 2013; Давтян С.А. 2015; Davtyan S., Aslanyan G., 2007; Davtyan S.H., 2012; Davtyan S.H., 2013; Davtyan S.,

Khachatryan M., 2016]:

Աշխատանքը փաստորեն հայտ է ներկայացնում «Բիոէթիկա» ինքնուրույն գիտաճյուղի կայացման, զարգացման համար, ինչը նպաստավոր է ո՛չ միայն բիոէթիկայի և հարակից գիտաճյուղերի (աստվածաբանության, հոգեբանության, իրավաբանության, բժշկագիտության և այլն), այլև հենց բուն փիլիսոփայության համար, քանի որ փիլիսոփայական վերլուծությունը ձգտում է ավարտուն կերպով ընդգրկել, իմաստավորել հանրային կյանքին առնչվող մի բնագավառ, հավելելով այս կամ այն խորությամբ արդեն կայացած փիլիսոփայական գիտաճյուղերը (բժշկության փիլիսոփայություն, կենսաբանության փիլիսոփայություն, կյանքի փիլիսոփայություն, արվեստի փիլիսոփայություն, կառավարման փիլիսոփայություն և այլն):

Ատենախոսության նյութերն օգտագործվում են «Փիլիսոփայություն» և «Բիոէթիկա» առարկաների դասավանդման գործընթացում, որ անցնում են Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողները, կլինիկական օրդինատորները, հայցորդներն ու ասպիրանտները, պարբերաբար նաև կրտսեր և միջին բուժանձնակազմը, դասախոսների որակավորման բարձրացման ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմը, ինչպես նաև, տարբեր երկրներից ուսանելու եկած անգլալեզու և ռուսալեզու քաղաքացիները:

Ատենախոսական ուսումնասիրության մեջ ձևակերպված դրույթներն ու հետևությունները կարող են օգտագործվել գիտության փիլիսոփայության դասընթացների, ինչպես նաև համապատասխան հատուկ դասընթացների մշակման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումն ու հեղինակային հրապարակումները

Ատենախոսության արդյունքները գիտազեկույցի ձևով ատենախոսի կողմից ներկայացված են միջազգային հետևյալ գիտաժողովներում.

- «Էթիկայի դասավանդումը բժշկական բուհերում» միջազգային գիտաժողով **Էյլաթ, Իսրայել**, 2002թ.:

- «Բժշկական Էթիկան Հայաստանում. Քաղցկեղով հիվանդի իրավունքը՝ իմանալ ճշմարտությունը» գիտագործնական համաժողով՝ կազմակերպած Հայ-Ամերիկյան Մշակութային Միության (ԱՄՆ), Հայ-Ամերիկյան Առողջության Կենտրոնի կողմից ԳԱԱ, 2002, **Երևան, Հայաստան**:

- «Բիոէթիկայի գծով փորձագետների տարածաշրջանային խորհրդակցություն», **2005, Մինսկ, Բելոռուս**, N4 գիտական նստաշրջանի համանախագահ փիլ.գիտ.դոկտոր, պրոֆ. Բ.Գ. Յուդինի և Տ.Վ. Միշատկինայի հետ:

- Միջազգային գիտաժողով՝ բիոէթիկայի հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում, 2007, **Մինսկ, Բելոռուս**

- Բիոէթիկայի հիմնախնդիրների 7-րդ Եվրոպական ակադեմիա 2008, **Լյուդվիգսհաֆեն, Գերմանիա**:

- Բիոէթիկայի փորձագետների խորհրդակցություն՝ հրավիրված «Բիոէթիկա դասավանդողների տարածաշրջանային ընկերակցություն» ստեղծելու, կրթության բնագավառում համագործակցությունը զարգացնելու նպատակով, 2009, **Քիշինյով, Մոլդովա:**

- Միջազգային գիտաժողով «էթիկական կոմիտեները հիվանդանոցներում», 2009, **Ցֆաթ, Իսրայել**:

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի ազգային մասնաճյուղերի վարիչների խորհրդակցություն, 2009, **Ցֆաթ, Իսրայել:**

- Միջազգային գիտաժողով «Բիոէթիկայի դասավանդման մեթոդները, բովանդակությունը», 2010, **Ակկո, Իսրայել**, թիվ 6 գիտական նստաշրջանի համանախագահ պրոֆեսոր Շմուլ Վոլֆմանի հետ:

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի ազգային մասնաճյուղերի վարիչների խորհրդակցություն, 2010, **Ակկո, Իսրայել:**

- Միջազգային կոնֆերանս և կուրսեր բիոէթիկայի վերաբերյալ, 2011**, Սինգապուր, Սինգապուր**, ընդհանուր գիտական նստաշրջանի համանախագահ պրոֆեսոր Մոտի Բենյաքարի հետ:

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի ազգային մասնաճյուղերի վարիչների խորհրդակցություն, 2011**, Սինգապուր, Սինգապուր:**

- Միջազգային 8-րդ կոնֆերանս «Բիոէթիկայի դասավանդման բովանդակությունը, մեթոդները, ուղղությունները», 2012, **Տիբերիաս, Իսրայել**:

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի ազգային մասնաճյուղերի վարիչների խորհրդակցություն, 2012, **Տիբերիաս, Իսրայել**:

- UNESCO-ի Բիոէթիկայի ամբիոնի 10-րդ համաշխարհային կոնֆերանս՝ «Բիոէթիկա, բժշկական էթիկա, առողջապահական իրավունք», N1 գիտական նստաշրջանի համանախագահ պրոֆ. Դ. Բալակրիշնանի հետ 2015թ., **Իսրայել, Երուսաղեմ**:

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի ազգային մասնաճյուղերի վարիչների խորհրդակցություն, 2015թ., **Իսրայել, Երուսաղեմ:**

- 9-րդ համաշխարհային կոնֆերանս՝ «Բիոէթիկա, բժշկական էթիկա, առողջապահական իրավունք», N6 գիտական նստաշրջանի համանախագահ պրոֆ. Ն. Սիդորովայի հետ, 2013թ., **Իտալիա, Նեապոլ**:

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի (Հայֆա) միջազգային ցանցի ազգային մասնաճյուղերի վարիչների խորհրդակցություն, 2013թ., **Իտալիա, Նեապոլ**:

- Համաշխարհային 11-րդ գիտաժողով՝ «Բիոէթիկա, բժշկական էթիկա, առողջապահական իրավունք», «Բժշկական մարդկայնություն» գիտական

նստաշրջանի նախագահ պրոֆեսոր Ապարիցիդա Ցեզարինի հետ, 2015թ., **Իտալիա, Նեապոլ:**

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի ազգային մասնաճյուղերի վարիչների խորհրդակցություն, 2015թ., **Իտալիա, Նեապոլ:**

«Կենսաբժշկության բարոյա–իրավական հիմնխանդիրները» հանրապետական գիտաժողով կազմակերպած՝ Երևանի Մխ. Հերացու անվան պետական բժշկական և Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանների ուժերով, 2016 թ., **Հայաստան, Երևան**:

Ատենախոսության թեման հաստատվել և քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի ընդլայնված 01.10.2012 և 19.11.2015 թ. նիստերում:

Աշխատանքի ծավալն ու կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը 230 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել է խնդրո առարկայի մշակվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ «Բիոէթիկայի մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերը» շարադրված է բիոէթիկայի՝ որպես գիտական գիտելիքի նոր ձևի հեղինակային հայեցակարգը, բացահայտված են բիոէթիկայի մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերը:

«Բիոէթիկան որպես գիտական գիտելիքի նոր ոլորտ» ենթագլխում բիոէթիկայի ծագման, զարգացման և գործառնության առանձնահատկությունները վերլուծվել են ժամանակակից գիտատեխնիկական զարգացումների, նոր տեխնոլոգիաների կիրառման անկանխատեսելի հետևանքների ուսումնասիրման համատեքստում:

Բիոէթիկայի միջգիտակարգայնությունը, որը որոշում է նրա մեթոդաբանական մշակման անհրաժեշտությունը, պատճառաբանվում է մի շարք գործոններով: Նախ, 20-րդ դարի երկրորդ կեսից բջջային կենսաբանության, գենետիկայի նոր ճյուղերից՝ գենոմիկայի, ինչպես նաև գենետիկ տվյալների բանկերի ստեղծումը, մարդու գենոմի կառուցվածքի ուսումնասիրությունները, իմունաբանության, փոխպատվաստաբանության, անեսթեզիոլոգիայի, ռեանիմատոլոգիայի, գենային թերապիայի և այլ ոլորտներում տարվող հետազոտությունները հրատապ են դարձրել դրանց փիլիսոփայական-մեթոդաբանական իմաստավորման և բիոէթիկական գնահատման, ինչպես նաև հումա-

նիտար փորձաքննության անցկացման սկզբունքների մշակման հիմնահարցերը [Тищенко П.Д., 2008]:

Մարդու կողմից ստեղծված աննախադեպ տեխնոլորտը այսօր, որոշ իմաստով, հարցականի տակ է դնում պատասխանատու որոշումներ կայացնելու և դրանց հետևանքները վերահսկելու մարդու ունակությունը: Դրան նպաստում են նաև գլոբալացվող աշխարհի նորանոր ռիսկերը և մարդու էության ընբռնման ավանդական եղանակները, կամ, որ նույնն է, ժամանակի մարտահրավերների տրամաբանությանը չհամապատասխանող ավանդական կարծրատիպերը:

Երկրորդ, ի հայտ են եկել սկզբունքորեն նոր կենսաբժշկական տեխնոլոգիաներ, որոնք էապես փոխել են մարդու ֆիզիկական և բարոյական կեցությունը: Այդ տեխնոլոգիաները ներխուժել են մարդկային կյանքի բոլոր ոլորտները, փոխել մարդու գենոմը, կառավարելի դարձրել թե՛ բազմացման մեխանիզմը, և թե՛ մահանալու գործընթացը և այլն:

Ստեղծվել է աննախադեպ իրավիճակ, երբ մարդկային կյանքը կարող է դառնալ և արդեն իսկ դառնում է կենսաբժշկական զանազան ձեռնածությունների (մանիպուլյացիաների) օբյեկտ /ներառյալ փորձանոթի մեջ բազմացումը, փոխնակ (սուրոգատ) մայրությունը, արհեստական ուղեղի ստեղծումը, մարդկային օրգանների և հյուսվածքների օգտագործումը առևտրական նպատակներով և այլն և այլն/:

Ահա թե ինչու փիլիսոփայական հետաքրքրությունների կենտրոնը սկսել է աստիճանաբար փոխադրվել իմացաբանությունից և գիտափորձարարական հետազոտության տրամաբանությունից դեպի գիտության էթիկայի, գիտնականի բարոյական պատասխանատվության հիմնախնդիրները:

Բիոէթիկան որպես նոր գիտակարգ, այսօր վերաճել է աշխարհայացքային հարացույցների փոխակերպման և վերաիմաստավորման հզոր գործոնի, որի փիլիսոփայական իմաստավորման անհրաժեշտությունը թելադրվում է բնագիտական և հասարակագիտական գիտելիքների զուգամերձեցման /կոնվերգենցիայի/ և հումանիզացման հրամայականներով: Տեղին է հիշել Ի. Կանտի խոսքերը՝ փիլիսոփայությունը, վերջին հաշվով, մարդկանց հարկավոր է նրա համար, որպեսզի պատասխանի «ինչպե՞ս ապրել», ավելի ստույգ՝ «ինչպես ապրել երկար՝ չհիվանդանալով» հարցին [Кант И., 1980]: Բժշկական տեխնոլոգիաների գերակտիվ ներխուժման շնորհիվ, «ինչպե՞ս ապրել» կանտյան հարցադրումը այսօր փոխակերպվել է «ինչպե՞ս պաշտպանել կյանքը» հարցի:

Բիոէթիկայի կենտրոնական խնդիրը դառնում է՝ հասարակական գիտակցության մեջ կյանքի իմաստի, նրա նոր արժեբանության ձևավորման հիմնահարցը, քանի որ մարդու արժեհամակարգի գերագույն արժեքը եղել է և կա մարդկային կյանքը,այն, թե ինչն է մարդու կյանքին հաղորդում իմաստ, ուժ և ապրելու հզոր խթան: Դրա կողքին կարևորվում են նաև առողջության, արժանապատվության, արդարության, գթասիրության հիմնարար արժեքները:

Ատենախոսության մեջ շեշտվում է, որ բժշկության և փիլիսոփայության զուգամերձեցումը, բիոէթիկայի հիմնահարցերի փիլիսոփայական վերլուծման

ապահովման անհրաժեշտությունը թելադրվում է նաև նրա տեսականացման օբյեկտիվ պահանջներով: Ակներև է, որ այսօր պատշաճ ուշադրություն չի դարձվում հենց տեսական բիոէթիկայի հարցերին, որոնք ամբողջովին կապված են գիտության փիլիսոփայության հետ [Тищенко П.Д., 1992; Юдин Б.Г., 2003; Седова Н.Н., 2015]: Դա վկայում է գիտության փիլիսոփայության սոցիալական արժեքի օրինաչափ աճի մասին: Գիտության փիլիսոփայությունը և էթիկան պատմականորեն եղել են փոխկապված:

Դասական փիլիսոփայության մեջ էթիկան դիտարկվել է որպես պրակտիկ փիլիսոփայության ձև, որպես բարոյական ընտրության հիմնավորման և մարդու գործունեության բարոյական գնահատման կարևորագույն չափանիշ: Եվ ժամանակակից կենսաբժշկությամբ հարուցված նոր տեխնոլոգիաների պայմաններում պրակտիկ փիլիսոփայությունը՝ բիոէթիկայի միջոցով հզոր ազդակ է ստանում իր զարգացման համար:

Բիոէթիկայի միջգիտակարգայնությունը որոշվում է բիոէթիկական հիմնախնդիրների կոմպլեքսայնությամբ և պահանջում է դրանց նկատմամբ նույնպիսի կոմպլեքսային մոտեցում: Դա իր հերթին պահանջում է ըստ ամենայնի հաշվի առնել նաև կենսաբժշկության և բժշկական նոր տեխնոլոգիաների իմաստավորման աշխարհայացքային և արժեբանական ասպեկտների հստակեցում: Բնագիտական, այդ թվում բժշկագիտական գիտելիքի և սոցիալ-հումանիտար գիտելիքի փոխմերձեցումը, մի կողմից, ազդակում է քաղաքակրթական որոշ հիմնախնդիրների փիլիսոփայական իմաստավորմանը, մյուս կողմից՝ կենսաբժշկական խնդրաշարը բարձրացնում է հասարակական քննարկումների և իմաստավորման նոր մակարդակ:

«Բիոէթիկայի աշխարհայացքային առանձնահատկությունները» ենթագլխում հիմնավորվել է այն ընբռնումն, ըստ որի բիոէթիկան՝ ոչ թե պարզապես կյանքի նոր էթիկա է, որն ընկած է բժշկական էթիկայի հիմքում, այլ նաև՝ կյանքի պրակտիկ փիլիսոփայության նոր եղանակ, նոր աշխարահայացք: Ավելին, կենսաբժշկական տեխնոլոգիաների ագրեսիվ ներխուժման պայմաններում բիոէթիկան նաև հանդես է գալիս որպես կյանքի և արժանապատվության նոր փիլիսոփայություն [Марков Б.В., Солонин Ю.Н., Шилков Ю.М., 1996]: Միանգամայն ակներև է, որ կենսաբժշկական տեխնոլոգիաների զարգացման ներկայիս փուլի աշխարհայացքային հարցերը հնարավոր չէ լուծել մասնավոր գիտական գիտելիքների, առանձին կրոնադավաբանական կամ բժշկական ուսումնասիրությունների նեղ շրջանակներում:

«Բիոէթիկայի սոցիալ-արժեբանական գործառույթը» ենթագլխում նշվում է, որ այսօրվա Հայաստանում բիոէթիկայի արժեբանական ուսումնասիրությունները խիստ պահանջված են, քանի որ կապված են բժշկական էթիկայի հիմնական նորմերի և սկզբունքների աղճատման-խաթարման դրսևորումների հաղթահարման, մարդու կյանքի արժեքը գնահատելու անհրաժեշտության հետ: Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը որպես բիոէթիկական հիմնահարց քննարկվել և քննարկվում է միջազգային ատյաններում

(Առողջապահության համաշխարհային կազմակերպության 1975թ. որոշումը, 1986թ. Եվրոխորհրդի համաձայնագիրը, բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին հռչակագիրը 2005 և այլն) [Փորձարարական և գիտական այլ նպատակներով օգտագործվող ողնաշարավոր կենդանիների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1986); Կենսաբժշկության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիա: Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա (1997) http://convetions.coe.int/Treaty/en/Treaties/html/-164/htm66; Հելսինկյան հռչակագիր: «Հանձնարարականներ բժիշկների համար մարդու՝ որպես հետազոտության օբյեկտի մասնակցությամբ անցկացվող կենսաբժշկական հետազոտութ-յունների վերաբերյալ» (1964) http: //www. wma. net/en/ 30publications/ 10policies/b348 և այլն]: Հայկական իրականության պայմաններում մարդու իրավունքների և ար-ժանապատվության պաշտպանության փիլիսոփայական իմաստավորումը պահանջում է լուծել մի շարք խնդիրներ:

Երկրորդ՝ «Բիոէթիկան որպես պրակտիկ փիլիսոփայության նոր գիտակարգ» գլխում քննարկվում են բիոէթիկայի՝ որպես պրակտիկ փիլիսոփայության նոր ձևի կայացման պատմական նախադրյալները և հանգամանքները:

«Բիոէթիկայի ծագման նախապատմությունը» ենթագլխում առաջադրվում է այն կանխադրույթն, ըստ որի բիոէթիկան որպես նոր գիտակարգ, յուրօրինակ կամուրջ՝ կենսաբանության և էթիկայի միջև, պատմականորեն կայացել է բնագիտական, տեխնիկական և հումանիտար գիտությունների հատման կետում: Վ.Ռ.Պոտտերի հանրահայտ «Բիոէթիկա՝ կամուրջ դեպի ապագա» /1971/ գրքից հետո, արևմուտքում հրատարակվել են մեծ թվով հիմնարար աշխատություններ: Դրանց թվում հիշատակության արժանի են հետևյալները. Թ. Ռայխ «Բիոէթիկայի հանրագիտարան» /1978, ԱՄՆ/, Խ. Յոնաս «Պատասխանատվության սկզբունքը» /1979, Գերմանիա/: Վերջինիս մեջ ձևակերպվել է կենսոլորտային էթիկայի դոկտրինը, որը մոտ է Վ.Ռ. Պոտտերի հայեցակարգին: Հրատարակվել է նաև Դ. Գարսիա «Բիոէթիկայի հիմունքներ» /1989/ արժեքավոր աշխատությունը: Դրանում ներկայացված է նաև բիոէթիկական գիտելիքների ձևավորման պատմությունը՝ Հիպոկրատեսից մինչև մեր օրերը, միաժամանակ տրված է բիոէթիկայի այնպիսի հասկացությունների էվոլյուցիան, ինչպիսին են բարերարությունը, բարիքը, չարիքը, անձի ինքնավարությունը, արդարությունը և այլն: Հրատարակումների մեջ առանձնանում են Տ.Լ. Բիչամպի և Ջ.Ֆ. Չայլդրեսի «Կենսաբժշկական էթիկայի սկզբունքները» /1994, ԱՄՆ/ հայտնի աշխատանքը, որի մեջ ներկայացված են բիոէթիկայի ամերիկյան դոկտրինի հիմունքները, ըստ որոնց, բիոէթիկան ուսումնասիրում է կենսաբժշկության էթիկական հիմնախնդիրները՝ մարդու արժանապատվության և իրավունքների պաշտպանության համատեքստում:

Ենթագլխում քննարկվում են բիոէթիկայի որպես նոր գիտակարգի վերաբերյալ տարբեր հայեցակարգային ըմբռնումները: Ատենախոսության մեջ փաստարկված քննադատվում է այն մոտեցումը, որը բիոէթիկայի բովան-դակութ-

յունը նույնացնում է կենսաբժշկական էթիկայի հետ, դրանով նրա բովանդակությունը սահմանափակելով սոսկ բժիշկ-հիվանդ հարաբերությունների կարգավորման հարցերով: Կամ էլ՝ բիոէթիկան փոխկապակցվում է միայն առողջապահության համակարգի սոցիալական, բարոյական, իրավական, էկոլոգիական և այլ կոնկրետ հիմնահարցերի հետ:

Բիոէթիկան մենք դիտում ենք որպես միջգիտակարգային գիտելիքի նոր բնագավառ, որն ուսումնասիրում է բարոյական և սոցիալական հիմնախնդիրները, որոնք հարուցված են կենսաբժշկական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումներով: Փիլիսոփայական անդրադարձը (դիսկուրսը) կոչված է բացահայտելու բիոէթիկական հիմնախնդիրների էությունը: Այն թույլ է տալիս հասկանալ, որ բժշկի ցանկացած գիտահետազոտական գործունեություն՝ առանց բարոյական ազդակների, պարզապես, չի կարող իրագործվել: Բիոէթիկայի հիմնախնդիրները գտնվում են նաև աստվածաբան-բարոյագետների ուշադրության կենտրոնում: Բազմաթիվ հանձնարարականներ մշակվել են կաթոլիկ եկեղեցու կողմից, որոնք արտացոլված են Վատիկանի կողմից ընդունված փաստաթղթերում: Հայաստանում բիոէթիկայի տեսական հիմքերի մշակման գործում իրենց ավանդն ունեն Հայ Առաքելական եկեղեցու սպասավորներ Գևորգ Սրբ. Սարոյանը, բարեշնորհ Հրաչ սարկավագ Սարգիսյանը և այլք: Նրանց կողմից կազմված «Կենսաէթիկայի հիմնահարցեր» /2015 սբ. Էջմիածին/ ուսումնաօժանդակ ձեռնարկում հանգամանալից շարադրված է Հայ Առաքելական եկեղեցու պաշտոնական դիրքորոշումը բիոէթիկայի հարցերի վերաբերյալ: Անուրանալի է նաև վաստակաշատ հայ գիտնական-հետազոտող պրոֆեսոր Ռ.Ա. Հովհաննիսյանի վաստակը բիոէթիկայի գաղափարները ՀՀ-ում զարգացնելու և տարածելու գործում [ԲՍՀՀ, 2004; Հովհաննիսյան Ռ.Ա., Շիրինյան Ա.Ե., 2006]:

Հայաստանում բիոէթիկայի որպես միջգիտակարգային գիտելիքի նոր բնագավառի կայացումը և զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջին, կենսաբժշկական տեխնոլոգիաների բուռն զարգացումը առաջադրում է էթիկական նոր հիմնախնդիրներ, որոնք պահանջում են գիտափիլիսոփայական լայն իմաստավորում:

Երկրորդ, ժամանակակից կենսաբժշկությունը բնավ չի սահմանափակվում տեսական-իմամացաբանական խնդիրներով, այլ դառնում է մարդու կենսական գործընթացների կառավարման միջոցներից մեկը: Ընդ որում, բժշկության մեջ նոր մոտեցումները որոշ հակասության մեջ են մտնում ավանդական ազգային արժեքների, մտածողության, հոգեկերտվածքի հետ:

Երրորդ՝ հոգևոր իրադրության փոփոխությունը հայ հասարակության մեջ, հասարակական գիտակցության ժողովրդավարացումը, որտեղ կենտրոնական տեղ է գրավում մարդու իրավունքների առաջնայնության գաղափարը (երբեմն չափազանցված), որը հանգեցնում է մարդու պատասխանատվության վերացման կամ նսեմացման: Բարոյական բազմակարծության աճը, փորձարարական հետազոտությունների նկատմամբ էթիկական և իրավական վերահսկողության

անհրաժեշտությունը, բիոէթիկական հիմնախնդիրների համաշխարհայնացումը՝ այս ամենը նոր ազդակ է հաղորդում Հայաստանում բիոէթիկայի հիմնախնդիրների հետագա փիլիսոփայական մշակումներին [Давтян С.А., 2012]:

«Բիոէթիկայի պատմական մոդելները» ենթագլխում առանձնացվում և վերլուծվում են բժշկական էթիկայի ճարտարագիտական, պատերնալիստական գործակցային և պայմանագրային մոդելները:

Ատենախոսության մեջ վերլուծվում են ժամանակակից գիտական գիտելիքի և առողջապահության համակարգի հումանիզացման իրականացման մեխանիզմները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանն ունի բիոէթիկայի կայացման իր ազգային առանձնահատկությունները: Դրանց ուսումնասիրությունը բերում է այն եզրահանգման, որ հայրենական ավանդույթների և արևմտյան բիոէթիկայի նվաճումների համադրումը միայն թույլ կտա լիովին բացահայտել բժշկության հումանիստական բովանդակության հետագա զարգացման հնարավորությունները:

«Բժշկի պարտականությունները և հիվանդի իրավունքները» ենթագլխում առաջադրվում և հիմնավորվում է այն թեզը, որ բժշկի պարտականությունների և հիվանդի իրավունքների իրականացման պրակտիկան ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել սոցիալ-տնտեսական, հոգեբանական և մշակութային այն համատեքստը, որի շրջանակներում գործառում են բժիշկ-հիվանդ հարաբերությունները:

Ինչպես հավաստում են ատենախոսի կողմից անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները, հայ բժիշկների և հիվանդների մեծամասնությունը մնում է պատերնալիզմի դիրքերում:

Բժիշկներից շատերը հիվանդի առողջությունը և նրա կյանքի երկարացումը համարում են անհամեմատ ավելի կարևոր արժեքներ, քան հիվանդի ընտրության իրավունքը:

Հաճախ կասկածի տակ է առնվում նաև հիվանդի իրազեկված լինելու իրավունքը: Այսօր Հայաստանում բժիշկների և հիվանդների գիտակցությունը աստիճանաբար ազատագրվում է որոշ գաղափարական կապանքներից:

Երկրորդ, այն դառնում է ավելի ու ավելի բազմակարծ, որն արտացոլում է հայ հասարակության մեջ առկա դիրքորոշումների բազմազանությունը /պատերնալիստականից մինչև ազատական (լիբերալ) դիրքորոշումները/: Երրորդ, հասարակական, ազգային գիտակցությունը ձեռք է բերում ավելի քննադատական բնույթ: Դա առանձնապես ակնառու դրսևորվում է բժշկական հիմնահարցերի, առողջապահական հիմնարկների գործունեության հասարակական գնահատականների մեջ:

Ատենախոսության մեջ շեշտվում է այն միտքը, որ մեզանում ստեղծվել է յուրօրինակ արատավոր շրջան. առողջապահության համակարգի նկատմամբ անվստահության լայն տարածումը հարուցում է առողջապահության ոլորտի հուզագրգիռ հասարակական քննադատություն: Ի պատասխան դրան՝ այդ ոլորտի ներկայացուցիչները վկայակոչում են երկխոսության գծով պատասխանատու

գործընկերոջ բացակայության չարչրկված թեզը: Խնդիրն այն է՝ ինչպես կազմաքանդել այդ շրջանը՝ առողջապահության պատասխանատուների և Հայաստանի քաղաքացիական հասարակության փոխգործակցությունը վերածելով աջակցության և հակադարձ կապի արդյունավետ մեխանիզմի: Այսինքն, անհրաժեշտ է առողջապահության համակարգի, բժշկական հանրույթի և հիվանդների հարաբերությունների կանոնակարգման մեխանիզմները այնպես կարգավորել, որպեսզի դրանք ճիշտ ժամանակին ընկալեն ու արտահայտեն հայ հասարակության տարբեր շերտերի շահերը՝ մեղմացնելով առողջապահության համակարգի և քաղաքացիական հասարակության միջև առկա լուրջ հակասությունները: Աշխատանքում առաջադրվում և հիմնավորվում է բժշկական հանրույթի, առողջապահության համակարգի ինստիտուտների և քաղաքացիական հասարակության միջև ակտիվ ներազգային երկխոսության անհրաժեշտությունը:

Երրորդ գլուխը՝ «Բիոէթիկայի հիմնահարցերի փիլիսոփայական, բարոյա-իրավական տեսանկյունները», նվիրված է հոգեկան հիվանդների, մտավոր թույլ զարգացածների, հղիության արհեստական ընդհատման, ինչպես նաև գենային տեխնոլոգիաների և կլոնավորման բարոյահիրավական առնչությունների վերլուծությանը:

«**Հոգեկան հիվանդների, մտավոր թույլ զարգացածների իրավունքների պաշտպանության գործում քաղաքացիական հասարակության դերն ու նշանակությունը**» ենթագլխում նշվում է, որ բժիշկ-հիվանդ հարաբերությունների իրական երանգապնակը հետխորհրդային երկրներում, ներառյալ Հայաստանում, անհամեմատ ավելի բարդ ու հակասական է, մասնավորապես այն միշտ չէ որ բավարարում է բժշկական էթիկայի ժամանակակից պահանջներին: Քիչ չեն դեպքերը, երբ հոգեկան հիվանդներին տևականորեն պահել են հոգեբուժական հիմնարկում, և դա այն դեպքում, երբ նա վտանգ չի ներկայացրել շրջապատի համար: Հիվանդի իրավունքների անսքող ոտնահարման վերաբերյալ չկան դատական փաստեր (որ դրա համար մեղավոր անձինք ենթարկվել են պատասխանատվության):

Նկատենք նաև, որ մեր երկրում հոգեկան հիվանդների նկատմամբ որոշ խտրականությունը ունի ոչ միայն իրավական, այլև իր դրսևորման այլ ձևերը. տնտեսական՝ ֆինանսավորումն ըստ մնացորդային սկզբունքի, բարոյահոգեբանական՝ հասարակությունից կոշտ կերպով մեկուսացնելու պրակտիկան և այլն: Դա ամբողջովին չի համապատասխանում մարդու կյանքի նկատմամբ հումանիստական մոտեցման պահանջներին, ինչպես նաև բժշկական էթիկայի գլխավոր պատգամին՝ «հիվանդի բարօրությունը բարձրագույն օրենք է»: Բժշկական պրակտիկայում օրինականության ամրապնդումը՝ հիվանդների իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է:

«**Հղիության արհեստական ընդհատման հիմնախնդիրը. բարոյահրավական կարգավորման հրատապ հարցեր» ենթագլխում** քննարկվում են հղիության ընդհատման վերաբերյալ ազատական լիբերալ, պահպանողական, և չափավոր մոտեցումների առանձնահատկությունները: Պահպանողականները

գլխավորապես հենվում են կրոնաբարոյական արժեքների վրա: Հայտնի է, որ քրիստոնեությունը, (մասնավորապես Հայ Առաքելական եկեղեցին), վճռականորեն մերժում է արհեստական վիժեցումը, պաշտպանելով այն տեսակետը, որ պտուղն արդեն մոր մարմինը չէ, այն՝ այլ մարդկային էակի կյանքն ու մարմինն է: Քրիստոնեության տեսանկյունից պտուղն արդեն իսկ Աստծո պատկերի կրողն է, որը չպետք է հանձնվի արտաքին աշխարհի ուժերի տնօրինությանը. «Նա, ով պիտի ծնվի, արդեն մարդ է» (Տերտուլիանոս): Արհեստական վիժեցման հակառակորդները վկայակոչում են աստվածաշնչյան այն հատվածները, որտեղ Աստված ներկայանում է իբրև կենդանի արարածների միակ ստեղծողը /Ես. 44:2, Սաղմ. 138:13, Ղուկ. 1-ին գլուխ/:

Ո՛չ փիլիսոփայության, ո՛չ էլ բժշկագիտության մեջ չկան հասկացություններ, որոնք հայեցակարգային ձևակերպում են տալիս մարդկային կյանքի առանձնահատուկ վիճակներին՝ դեռևս չծնված մարդու կյանքը, և այն մարդու կյանքը, որը կանգնած է մահվան շեմին: Դրա պատճառն այն է, որ մարդկային կյանքի այդ վիճակների իմաստավորման հիմնախնդիրը արդիական է դարձել միայն 20-րդ դարում՝ բժշկական նոր տեխնոլոգիաների զարգացման հետևանքով:

«Գենային տեխնոլոգիաների և կլոնավորման փիլիսոփայական և բարոյագիտական հիմնահարցերը» ենթագլխում քննարկվում են մարդկային կյանքի կառավարման հետ կապված նորագույն տեխնոլոգիաների էթիկական խնդիրները:

Ատենախոսության մեջ նշվում է, որ կլոնավորումը միանշանակ չի ընկալվում ո՛չ բժշկական հանրույթի և ո՛չ էլ լայն հասարակայնության կողմից: Կլոնավորման գաղափարն ինքնին հակաբնական է: Եվ, որ նույն գենետիկ կոդով մի քանի մարդկանց կրկնօրինակումը («պատճենահանումը»), կարող է լուրջ հարված հասցնել մարդկային արժանապատվությանն ու անկրկնելիությանը: Նաև արտահայտվում է մտավախություն, որ կլոնավորումը կարող է հանգեցնել մարդ-մուտանտների ստեղծմանը:

Ելնելով այս վերլուծությունից, հետևություն է արվում, որ, թեև գենային թերապիայի նպատակները առայժմ հստակ են, տակավին խնդրահարույց են մնում ժառանգական ռեսուրսների վերաբաշխման, կիրառելիության ոլորտների, անձի իրավունքների և գլոբալ վերահսկողության հիմնահարցերը:

Կլոնավորման գաղափարը մարդկությանը, նրա բանականությանը և փիլիսոփայությանն առաջադրում է սկզբունքորեն նոր խնդիրներ, որոնց հետ նախկինում չի բախվել: Առաջին հերթին, խոսքը մարդկային անձի անկրկնելիության, անհատականության, ինքնավարության կորստի մասին է:

Երկրորդ, գենետիկ ձեռնածությունները (մանիպուլյացիաները), ժառանգական գենի արհեստական վերածևումները, բնության՝ այս սրբության սրբոցի մեջ մարդու կոպիտ ներխուժումը կարող է, ի վերջո, փոխել մարդկության կենսաբանական և սոցիոմշակութային կոդը: Ինչ երաշխիք կա, որ հեռավոր ապագայում չեն հայտնվի մարդու գենետիկ, ռասսայական մաքրության զառան-

ցական գաղափարի նոր հետևորդներ, որոնք կփորձեն մաքրագործել ապագա սերունդներին՝ ուղղակի արգելելով «թերարժեք» մարդկանց ծնունդը և նախապատվության տալով «ազնվածիններին»:

Չորրորդ՝ «Կյանքի և մահվան հիմնախնդրի նկատմամբ փիլիսոփայական ռեֆլեքսիան» գլխում մահվան նկատմամբ մարդու վերաբերմունքի փիլիսոփայական ուսումնասիրության հրատապությունը բացատրվում է մի շարք գործոններով: Նախ, մահը կամ մահանալու գործընթացը այսօր հաճախ նկարագրվում է որպես «մահ հիվանդանոցում», որտեղ ծանր հիվանդը, պատկերավոր ասած, պարուրված է բժշկական տեխնիկայի «լարերով և խողովակներով», որտեղ նսեմացվում է բուն իսկ մարդու մահանալու փաստի արժեքային նշանակությունը:

Երկրորդ, ժամանակակից ինտենսիվ թերապիայի, վերականգնող թերապիայի պրակտիկ գործադրումները հաճախ հանգեցնում են տարիմաստ արդյունքների, երբ մի դեպքում կյանքի և մահվան սահմանները անորոշ են դառնում /ուղեղի մահը/, իսկ մյուս դեպքում՝ մահանալու գործընթացն արհեստականորեն երկարացվում-ձգձգվում է /վեգետատիվ վիճակ և այլն/:

Մահացողին ժամանակակից բուժօգնություն ցույց տալու պրակտիկան վկայում է, որ կյանքի նկատմամբ հարգանքի էթիկական սկզբունքը այսօր հաճախ փոխակերպվում է արժանապատիվ մահվան մարդու իրավունքի սկզբունքի:

Երրորդ, ժամանակակից հասարակության մեջ արժանապատիվ մահվան մարդու իրավունքի գաղափարն ակտիվորեն քննարկվում է երկու ուղղություններով՝ որպես էֆթանազիայի և որպես հոսպիսների /մահացողներին պալիատիվ սոցիալ-բժշկական օգնության/ հիմնախնդիր:

«Մահը՝ փիլիսոփայական և կրոնագիտական ուսումնասիրությունների կիզակետում» ենթագլխում ցույց է տրվում, որ մահվան նկատմամբ մարդու վերաբերմունքի հիմնահարցը առանցքային նշանակություն է ունեցել և ունի փիլիսոփայության համար: Մահվան ֆենոմենի նկատմամբ փիլիսոփայական մոտեցումները պայմանավորված են, նախևառաջ, պատմամշակութային զարգացման տարբեր փուլերում մարդու, բնության և հասարակության փոխհարաբերությունների ռացիոնալ իմաստավորման հիմնախնդրով: Անտիկ փիլիսոփայության մեջ /Պլատոնի «Ֆեդոն», «Պետություն», «Օրենքներ» և Արիստոտելի «Պոլիտիկա», «Նիկոմախի էթիկա» աշխատություններում/ առաջադրվում է այն գաղափարը, որ մարդու բնությունը ինքնանպատակ չէ, հիմնականում դիտվում է որպես ամբողջի, այսինքն հասարակության /պետություն-պոլիսի/ մաս: Պլատոնը «Օրենքների» մեջ հենց այդ դրույթով է հիմնավորում մահապատժի՝ որպես քրեական պատժի կիրառման անհրաժեշտությունը: Անտիկ աշխարհին դեռևս անծանոթ էր «էֆթանազիա» եզրույթը, թեև և՛ Պլատոնը, և՛ Արիստոտելը պաշտպանում էին «ավելորդ մարդկանց» կյանքը դադարեցնելու գաղափարը: Միևնույն ժամանակ, երկու մեծ փիլիսոփաներն էլ վճռականորեն դեմ էին ինքնասպանությանը՝ ելնելով պետական շահերից /որպեսզի պետությունը չզրկվի

ամենակարևոր կապիտալից՝ զինծառայողությանը պիտանի քաղաքացիներից/: Ինչ վերաբերում է մահվան նկատմամբ վախի հիմնախնդրին, ապա Պլատոնը Սոկրատեսի շուրթերով առաջարկում էր դրա հաղթահարման առաջին լուծումներից՝ փիլիսոփայական ռեֆլեքսիան [Сократ. Платон. Аристотель. Сенека, 1995]:

Այդ գործընթացը, որ սկսվեց Վերածննդի դարաշրջանում և հզոր զարգացում ստացավ Լուսավորության դարաշրջանում, հանգեցրեց մահվան՝ որպես երկրային կյանքից այնկողմնային աշխարհին անցման քրիստոնեական ըմբռնման փիլիսոփայական ժխտմանը: 16-19-րդ դարերում փիլիսոփայության զարգացման գլխավոր ուղղություններից էր պանթեիզմը /Ջ. Բրունո, Բ. Սպինոզա, Գ. Հեգել և ուրիշներ/ [Спиноза Б., 1957; Гегель Г., 1990 и др.]: Բ. Սպինոզայի հայտնի միտքն այն մասին, որ «... ազատ մարդը ոչ մի բանի մասին այնքան քիչ չի մտածում, որքան մահվան մասին», արտահայտում է մահվան նկատմամբ մարդու՝ պանթեիստորեն հաշտ ու խաղաղ վերաբերմունքի էությունը (կյանքի նկատմամբ վախը այստեղ պարզապես անտեսվում-արհամարհվում է):

Այդ ուղղության ճգնաժամի նախանշանները սուր է զգացել Բ.Պասկալը [Паскаль Б., 1974]: Ֆ.Նիցշեի, «կյանքի փիլիսոփայությունը» բովանդակում է իր մեջ, ժամանակակից մշակույթին համահունչ, էֆթանազիայի, ինքնասպանության՝ մարդու իրավունքի արդարացման փաստարկում [Ницше Ф., 1990]: Զարգացնելով կյանքի փիլիսոփայության այդ միտումը, Մ. Հայդեգերը կիրառեց ֆենոմենոլոգիայի մեթոդը, ցույց տալով, որ վախը, որպես իր հիմքում մահվան վախ, մարդու առջև բացում է նոր հեռանկար: «Դեպի մահ կողմնորոշված կեցությունը, - նշում է Մ. Հայդեգերը, - ըստ էության վախն է» [Хайдеггер М., 1993]:

Էկզիստենցիալիզմը, փոխառելով այս դրույթը ստոիկյան բարոյագիտությունից՝ փոխակերպված ձևով արտահայտել է մարդկային գոյության անելանելիության և անիմաստության գաղափարը: Էկզիստենցիալիզմի փիլիսոփայության մեջ մահվան նկատմամբ մարդու վերաբերմունքի վերլուծությունը (Մ. Հայդեգեր, Կ. Յասպերս, Ն.Ա. Բերդյաև և ուրիշներ) կանխատեսեց մահվան և մահանալու աշխարհայացքային, բարոյահոգեբանական ասպեկտների բիոէթիկական կիրառական հետազոտությունները [Бердяев Н.А., 1992; Ясперс К., 1994]:

«Էֆթանազիայի երևույթը և նրա փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները» ենթագլխում նշվում է, որ «Էֆթանազիա» եզրույթը առաջին անգամ փիլիսոփայական շրջանառության մեջ մուծել է Ֆ. Բեկոնը՝ իր «Նոր Օրգանոն» աշխատության մեջ, հասկանալով թեթև, ոչ ցավագին մահը: «Թեթև մահ» նշանակությամբ այն օգտագործվել է «Հոչակագիր էֆթանազիայի մասին» փաստաթղթում /1980թ./: Այստեղ էֆթանազիան բնութագրվում է որպես «... ցանկացած գործողություն կամ, ընդհակառակը, անգործություն, որն իր էությամբ կամ դիտավորությամբ հանգեցնում է մահվան: Այսինքն՝ իր ուղղակի նշանակությամբ, էֆթանազիան բժշկի օգնությամբ կանխամտածված սպանութ-

յունն է»: Պրակտիկայում գործածվում է նաև «կյանքի ավարտին ընդունվող բժշկական որոշում» արտահայտությունը (Medical decision conserning end of Life) [Иванюшкин А.Я., Юдин Б.Г., 2001; Тищенко П.Д., 2000, Davtyan S., 2011]:

Էֆթանազիայի գնահատման հարցում առանձնանում են ազատական և պահպանողական մոտեցումները: Առաջինը ներկայացնում է էֆթանազիայի կողմնակիցներին, որոնք այն ընդունելի են համարում հետևյալ նկատառումներով: Նախ, մահը՝ հիվանդի անպատմելի տառապանքները դադարեցնելու վերջին միջոցն է:

Երկրորդ՝ կյանքի ավարտին հիվանդի մտահոգվածությունն իր հարազատների մասին («չեմ ցանկանում հարազատներիս բեռ դառնալ»):

Երրորդ, հիվանդի եսասիրական մղումներով՝ «ցանկանում եմ մեռնել արժանապատվորեն»:

Չորրորդ, նպատակահարմարության սկզբունքը, որը ենթադրում է անհուսալի հիվանդների կյանքի պահպանմանն ուղղված անարդյունք և երկարատև միջոցառումների դադարեցում:

Հինգերորդ, մի շարք անբուժելի հիվանդությունների բուժումը և կյանքի պահպանումը պահանջում է բավական թանկարժեք դեղորայքի և սարքավորումների կիրառում: Ակներև է, որ այստեղ տարբեր մոտեցումների էթիկական հիմքերը թաքնված են կյանքի ավարտին որոշում կայացնող կողմերի հոգեբանական դրդապատճառների մեջ: Հիվանդին կարող են մահացման մատնել և՛ դաժան հարազատները՝ լքելով իրենց ազգականին, և՛ հոգատար բժիշկները, որոնք սպառել են բուժման միջոցները ու ցանկանում են վերջ դնել հիվանդի զուր տառապանքներին: Ատենախոսության մեջ նշվում է, որ, անտարակույս, գոյություն ունի արժանապատիվ, առանց տառապանքների մեռնելու իրավունք: Եվ այդ իմաստով, էֆթանազիան՝ սովորական ընտրություն չէ մահվան և կյանքի միջև: Էֆթանազիան՝ էկզիստենցիալ ընտրություն է մահվան և մահվան միջև, այսինքն՝ ընտրություն է տանջալի մահվան և առանց տառապանքների մահվան միջև:

Սակայն դա բնավ չի ժխտում կամ վերացնում կյանքի պահպանման մասին օրենքը: Մահը՝ մարդկային կեցության անբաժան տարրն է՝ իր բոլոր հետևանքներով: **Դա նշանակում է, որ արժանապատիվ ապրելու** և **մեռնելու իրավունքը բնավ չի նույնանում միայն մեռնելու իրավունքի հետ, այն ներառում է նաև մարդասիրական եղանակներով բուժում ստանալու իրավունքը**: Նման բուժումը պետք է ավարտվի միայն բնական մահով, ընդ որում առանց դրա արհեստածին շահարկումների [Davtyan S.H., 2002; Դավթյան Ս.Հ., 2009; Davtyan S.H., 2011]:

Իսկ էֆթանազիայի հակառակորդ՝ պահպանողականները բերում են հետևյալ փաստարկները: Նախ, կրոնաբարոյական դիրքորոշումները՝ «մի սպանիր» և «Սիրիր մերձավորիդ հանուն Աստծո»:

Երկրորդ, «ինքնամաքրում՝ տանջանքի միջոցով» և «ծանր հիվանդ մարդկանց խնամքի միջոցով փրկվելու հույս» [Юдин Б.Г., 1991]:

Երրորդ, բժշկությանը հայտնի են բացառիկ դեպքեր, երբ ծանր, անբուժելի համարվող հիվանդությունը (օրինակ՝ քաղցկեղը) ինքնաբերաբար բուժվել է:

Չորրորդ, բժշկության զարգացման իմաստը բուժման նոր մեթոդների, հնարավորությունների ուղիների փնտրումն ու հայտնաբերումն է, կամ, որ նույնն է, պայքարը անբուժելի համարվող հիվանդությունների և մահվան դեմ [Уиклер Д и др., 1989; 1990; Неговский В.А., 2009; Դավթյան Ս.Հ., 2012]:

Էֆթանազիայի առավել հետևողական հակառակորդները հոգևորականներն են, որոնք այն համարում են Աստծո օրենքներին հակառակ կատարվող գործողություն: Ըստ քրիստոնեական ավանդության, կյանքն Աստծուց տրված պարգև կամ փոխառություն է: Աստված ստեղծել է ամեն ինչ, ներառյալ մարդկային կյանքը, և բարի է հռչակել այն /Քննդ. 1-31/: Աստվածաշնչյան Տասնաբանյայի վեցերորդ պատվիրանը զգուշացնում է. «Մի՛ սպանիր» /Ելք 20:13/: Պողոս առաքյալն իր հերթին ուսուցանում է. «Չգիտե՞ք, թե ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու» /Ա.Կորնթացիներ 6:19/: Աստվածաշնչում հստակ է, որ մարդը չի կարող ընտրել իր մահվան ժամանակը: Այդ մասին տեղեկանում ենք Ժողովող գրքից. «Ամեն բանի ժամանակը կա, ծնվելու ժամանակը և մեռնելու ժամանակը, տնկելու ժամանակը և տնկածը հանելու ժամանակը» /Ժող. 3:1-4/: Քրիստոնեական տեսանկյունից կյանքի արժեքը, կամ, որ նույնն է, կյանքի սրբությունը անպայման է: Կյանքը փոխարժեք չունի:

Դա նախ՝ նշանակում է, որ յուրաքանչյուր անհատի կյանքը պետք է արժևորվի անկախ կարգավիճակից, պայմանից, տարիքից կամ որևէ այլ բանից:

Երկրորդ՝ մարդկային ամիատի կյանքը նրա սեփականությունը չէ: Աստված է բառիս բուն իմաստով ամբողջ կյանքի սեփականատերը, ներառյալ մեր կյանքի: Ուրեմն, եթե դա այդպես է, ապա մեր կամ ուրիշի կյանքի հետ վարվելու իրավունքները սահմանափակ են:

Աշխատանքում ընդգծվում է, որ աստվածաբանական և փիլիսոփայական մտքի հայ ներկայացուցիչները բազմիցս անդրադարձել են մահվան խնդրին:

Այսպես, Դավիթ Անհաղթ մեծ փիլիսոփան, շարունակելով ու զարգացնելով Ներսես Մեծի և Հիպոկրատեսի միտքը, իր «Սահմանք իմաստասիրութեան» երկի 9-րդ գլխում նշում է, որ ո՛չ իրավացիորեն, և ո՛չ էլ անիրավացիորեն որևէ մեկն իրավունք չունի վերջ տալու իր կյանքին, քանի որ այդ ցանկությունը կամ գաղափարը դեմ է Արարչին: Ըստ Դավիթ Անհաղթի՝ մարդն իրավունք չունի «բռնությամբ կտրելու այն հանգույցը, որ Աստված է կապել»: Իսկ այն փորձությունները, որոնք մարդու մեջ նման միտք են առաջացնում, ըստ փիլիսոփայի, գոյություն ունեն «ոչ նրա համար, որ մարդ վերջ տա ինքն իրեն, այլ որպեսզի փորձվի մարդու հոգին»: Ըստ նրա պատկերավոր արտահայտության՝ լավ նավապետը խաղաղ ծովում չէ, որ փորձվում է, այլ *ալեկոծության ժամանակ*, նույնպես և «վեհագույն հոգին, - եզրակացնում է մեծ փիլիսոփան, - խիզախորեն ընդառաջ է գնում փորձությանը» [Դավիթ Անհաղթ, 1980թ.]:

Հատկանշական է, որ միջնադարյան հայ օրենսդրական մտքի ռահվիրաներ Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքի» 119 և 154

հոդվածների համաձայն միտումով կամ տգիտության պատճառով հիվանդի առողջությունը վնասող և մահն արագացնող բժիշկները պատժապարտ էին: Ակնհայտ է բժշկի պատասխանատվության խոր գիտակցումը հայկական օրենսդրության մեջ, որը նաև վկայում է երկրի բժշկանոցների մասնագիտական բարձր մակարդակի մասին [Վարդանյան Ս.Ա., 2000]:

Ժամանակակից փիլիսոփաների, իրավագետների և բժիշկների մեծամասնությունը անթույլատրելի է համարում էֆթանազիան՝ իր բոլոր ձևերով, եթե անգամ դրանք կիրառվում են գթասիրական նկատառումներով [Դավթյան Ս., 2009; Davtyan S., Khachatryan M., Johrian A., Gazaryan K., 2014]:

ՀՀ «Բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության մասին» օրենքի /1996թ./ 23-րդ՝ «Էֆթանազիայի արգելումը» վերտառությամբ հոդվածում հստակ ձևակերպված է դրույթ (և փառք Աստծո, որ կա նման դրույթ), ըստ որի «Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էֆթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը, որևէ գործողությամբ և միջոցներով: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էֆթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով» [ՀՀ քրեական օրենսգիրքը բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին (ընդունված՝ ԱԺ կողմից 04.03.1991 թ. Հ.Օ-42, բաց. 25,10,10)]:

«**Պալիատիվ բժշկության զարգացման հեռանկարները որպես այլընտրանք էֆթանազիային» ենթագլխում** նշվում է, որ ժամանակակից հոսպիսները՝ սոցիալ-բժշկական հիմնարկությունները արգասաբեր օգնություն են ցույց տալիս մահացողներին՝ նրանց ապահովելով՝ «մահ արժանապատվությամբ»: Այդ պրակտիկան, ըստ էության, Ֆ. Բեկոնի որոշ գաղափարների իրականացման կոնկրետ դրսևորումներից է, որոնք անգլիացի փիլիսոփան արտահայտել է գրեթե 400 տարի առաջ: «Արժանապատիվ մահվան մարդու իրավունքը» առաջադրվել և հիմնավորվել է Ֆ. Բեկոնի, Ջ. Լոկի փիլիսոփայական աշխատություններում:

Հոսպիսային առաքելության փիլիսոփայությունը՝ մահացող մարդուն օգնություն ցուցաբերելու գործում հաստատում է էթիկական նոր մոտեցումներ: Դա թույլ է տալիս, որոշ հավանականությամբ, դատել պալիատիվ բժշկության զարգացման հեռանկարների և այն հիմնախնդիրների մասին, որոնք կարող են ծագել կենսաբժշկական տեխնոլոգիաների զարգացման հետևանքով:

Պալիատիվ բժշկությունը ՀՀ-ում զարգացող նոր ոլորտ է, որ կարիք ունի պետական աջակցության և հովանավորության: Ամոքիչ օգնությունը որպես նորամուծություն Հայաստանում դեռևս չի ճանաչվել որպես մասնագիտացման ոլորտ [Հ. Կարապետյան, 2007]: Հակացավային և պալիատիվ օգնության առաջին ծառայությունները մեզ մոտ ստեղծվել են դոցենտ Հ. Կարապետյանի ջանքերով: Հայաստանում պալիատիվ բժշկության համակարգի կայացման մասին այսօր դեռ վաղ է խոսել:

«Եզրակացությունում» ամփոփվել են ատենախոսական հետազոտության արդյունքները և կատարվել հետևյալ ընդհանրացումները.

➢ Առաջին անգամ ուսումնասիրվել են բիոէթիկայի՝ որպես արդի գիտակարգի փիլիսոփայական և էթիկական հիմքերը:

➢ Հայաստանում բիոէթիկայի՝ որպես միջգիտակարգային գիտական գիտելիքի վերլուծության արդյունքում բացահայտվել են նրա աշխարհայացքային և արժեբանական հիմքերը:

➢ Հստակեցվել են մարդու կյանքի և առողջության պահպանման ազատական և պահպանողական մոտեցումները:

➢ Ազգային որոշ առանձնահատկությունների վերլուծության շնորհիվ բացահայտվել են այն գծերը, որոնք խոչընդոտում են կյանքի և առողջության նկատմամբ նոր արժեհամակարգի ձևավորմանը: Ցույց է տրվել, որ Հայաստանում ձևավորվել և գործառում է կյանքի և առողջության նկատմամբ վերաբերմունքի որոշակի տիպ, որը բնութագրվում է պատասխանատվության ցածր մակարդակով, կենսական ուժերի և առողջության ռեսուրսների ոչ խելամիտ օգտագործման ազգային առանձնահատկություններով:

➢ Հաստատվում է, որ ժամանակակից Հայաստանում բիոէթիկայի հիմնական սկզբունքների իրագործման դժվարությունները պայմանավորված են նրանով, որ մեզանում դեռևս չեն ձևավորվել անձնական կողմնորոշվածություն ունեցող բժշկական ավանդույթները, բժիշկ և հիվանդ փոխհարաբերություններում շարունակում են գերիշխել պատերնալիստական դիրքորոշումները, հայրենական առողջապահության մեջ խորացող ճգնաժամային իրավիճակը, բժշկության առևտրայնացման միտումները:

➢ Հայաստանում բիոէթիկայի՝ որպես նոր գիտակարգի կայացումը կապված է համամարդկային և ազգային արժեքների փիլիսոփայական իմաստավորման հետ: Դա հնարավորություն է ընձեռում բացահայտելու բարոյականության և իրավունքի հրամայականների կիրառումը պրակտիկ բժշկության մեջ:

➢ Հիմնավորվում է, որ բարոյագիտության հայրենական ավանդույթների և արևմտյան բիոէթիկայի նվաճումների համադրումը միայն թույլ կտա բացահայտել բժշկության հումանիստական բովանդակության զարգացման հնարավորությունները և մշակել ապագա բժիշկների բարոյական նկարագրի ձևավորման ռազմավարությունը:

➢ Անդրադառնալով Հայաստանում բիոէթիկայի ձևավորման գործընթացին, ատենախոսությունում անդրադարձ է կատարվում նաև բիոէթիկայի՝ որպես սոցիալական ինստիտուտի կայացման հիմնահարցին: Որպես այդպիսին, Բիոէթիկան ՀՀ-ում գտնվում է իր կազմավորման փուլում:

➢ Հաստատվում են նաև, որ բիոէթիկայի պրոբլեմային դաշտը կազմում են սերնդագոյացման և գենային թերապիայի, ներառյալ գենոմային հետազոտությունների և մանիպուլյացիաների, ինչպես նաև կյանքի և մահվան սահմանային իրավիճակների, հիվանդների իրավունքների ապահովման և իրազեկված համաձայնության բարոյափիլիսոփայական հիմնահարցերը: Այդ թվում նաև փոխ-

պատվաստաբանության, բժշկության առևտրայնացման, արդարության և այլնի բարոյափիլիսոփայական արդի խնդիրները:

➢ Հետազոտությունները մեզ հանգեցրել են այն եզրակացության, որ բիոէթիկայի առանձնահատկությունն այն է, որ ուշադրությունը կենտրոնացնում է գիտության և պրակտիկ գործունեության այն եզրերի վրա, որոնք այսօր հավակնում են արմատապես փոխել մարդու բնությունը կամ նրա կենսագործունեության կողմերը:

➢ Բիոէթիկայի հիմնահարցերի՝ կլոնավորման, գենային թերապիայի հիմքերի, փիլիսոփայական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն կարևոր արժեքային-աշխարահայացքային նշանակություն: Առանց աշխարհում և հասարակության մեջ մարդու դերի և տեղի փիլիսոփայական իմաստավորման, նրա բարոյահոգևոր էության բացահայտման, գենետիկայի նվաճումների իրականացման բոլոր փորձերը հղի են մարդկության համար անկանխատեսելի հետևանքներով:

➢ Էֆթանազիայի հիմնախնդրի փիլիսոփայական վերլուծությունը ցույց է տվել, որ 20-21-րդ դարերի փիլիսոփայական միտքը մահը այլևս չի դիտում որպես մարդկային կեցության նկատմամբ արտաքին և խորթ երևույթ, այլ բուն կյանքի գոյակազմիչ բաղկացուցիչ: Ընդ որում փիլիսոփայորեն մեկնաբանվում են ոչ միայն կյանքի և մահվան սահմանային իրավիճակների հիմնահարցերն, այլև մարդկային կյանքի էկզիստենցիալ հիմքերը՝ ազատությունը և պատասխանատվությունը: Էֆթանազիան՝ ընտրությունն է մահվան և մահվան միջև՝ տանջալի մահվան և տառապանքներից զերծ մահվան միջև: Սա է էֆթանազիայի սկզբունքային տարբերությունը ինքնասպանությունից: Էֆթանազիայի հիմնահարցը այսօր ոչ միայն դարձել է փիլիսոփայական և հասարակական սուր բանավեճերի առարկա, այլև չի ստացել իր վերջնական միասնական մեկնաբանությունը ժամանակակից էթիկայի, իրավունքի և բիոէթիկայի մեջ:

➢ Վերլուծելով էֆթանազիայի երևույթը, ընդհանրացվում են հայ հասարակության մեջ էֆթանազիայի կողմնակիցների և հակառակորդների փաստարկները: Հեղինակային բացասական դիրքորոշումը ամրապնդվում է ատենախոսի կողմից անցկացված սոցիոլոգիական հետազոտություններով:

➢ Ատենախոսության մեջ առաջադրված և հիմնավորված է այն, որ աջակցված մահվան և էֆթանազիայի գաղափարը մարդկային կյանքի անփոխարինելի արժեքի գաղափարն է մերժում, որը խոր արմատներ ունի հայ քրիստոնեական ավանդության և փիլիսոփայության պատմության մեջ (Դավիթ Անհաղթ, Գրիգոր Տաթևացի, Մ. Գոշև այլք):

➢ Մարդու արժանապատիվ մահվան իրավունքի գաղափարն այսօր ակտիվորեն քննարկվում է երկու ուղղությամբ. որպես էֆթանազիայի հիմնախնդիր և հոսպիսների /մահացողին ամոքիչ, պալիատիվ սոցիալ-բժշկական օգնության/ հիմնախնդիր: Ատենախոսության մեջ փորձ է արվել տալ պալիատիվ բժշկության պատմա-փիլիսոփայական մեկնաբանությունը, որի ակունքները կարելի է հայտնաբերել միջնադարյան մշակույթում: Իր հասուն տեսքով այն ածանցվում է

ժամանակակից ժողովրդավարության, իրավապաշտպանական գաղափարախոսությունից, որը ելնում է մահանալու և մահվան իրավիճակում անձի ինքնավարության նկատմամբ հարգանքի էթիկական սկզբունքից /այն առավել խորը մշակված է Ի.Կանտի կողմից/:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքներ.

1. Դավթյան Ս., Էվթանազիա // «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտատեղեկատվական հանդես, Երևան, ՀՀ, 2009թ., թ.3, նոյեմբեր, էջ 45-57:
2. Դավթյան Ս., Բիոէթիկա // Դասագիրք, Երևան, ՀՀ, 2009, 208 էջ:
3. Դավթյան Ս., Ազիզյան Ա., Նեմիշալյան Ռ., Սեքսուալ առողջությունը բարոյականության տեսանկյունից // «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտատեղեկատվական հանդես, Երևան, ՀՀ, 2009թ., թ. 1, էջ 51-52:
4. Դավթյան Ս., Բիոէթիկայի ներածություն // Մենագրություն, Երևան, ՀՀ, 2012, 333 էջ:
5. Դավթյան Ս., Գիտատեխնիկական առաջընթացի հետևանքների բիոէթիկական ուսումնասիրության հիմնահարցեր // ԵՊԲՀ, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ, 2012թ., էջ 487-494:
6. Դավթյան Ս., Մարդկային հաղորդակցություն: Բժիշկ-հիվանդ հարաբերությունների ներդաշնակեցման սոցիո-մշակութային բնութագրեր // Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Տարեկան հաշվետու գիտաժողով, Գիտական հոդվածների ժողովածու, հատոր II, Երևան, ՀՀ, 2013թ., էջ 342-351:
7. Դավթյան Ս., Խոսքաբուժության սոցիալ-փիլիսոփայական հիմքերը «Նարեկի» օրինակով // Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Տարեկան հաշվետու գիտաժողով, Գիտական հոդվածների ժողովածու, հատոր II, Երևան, ՀՀ, 2013թ., էջ 335-342:
8. Դավթյան Ս., Կենսաբժշկական փորձարկումների սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն // Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ, 2014, էջ 45-50:
9. Դավթյան Ս.Հ., Բիոէթիկայի սոցիալ-արժեբանական գործառույթը, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի տարեգիրք, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ, 2016, էջ 215-226:
10. Դավթյան Ս.Հ., Բիոէթիկայի մեթոդաբանական և աշխարհայացքային հիմքերը, Կանթեղ, գիտական հոդվածներ, Երևան, ՀՀ, 2016, N2, էջ 182-197:
11. Давтян С., Асланян Г., Исторические и культурные основы этической экспертизы биомедицинских исследований // В книге “Этическая экспертиза биомедицинских исследований в государствах-участниках СНГ”

(социальные и культурные аспекты), Санкт-Петербург, РФ, 2007, стр. 110-128.
12. Давтян С., Казарян К., Влияние антропогенных факторов на окружающую среду и экологию человека // В научно-практическом журнале "Экологический вестник", № 4 (18), Минск, Республика Белорусь, 2011, стр. 17-25.
13. Давтян С., Казарян К., Авдалян А., Человеческий смысл философии и сверхзадача Биоэтики // В сборнике научных статей «Стратегия выживания в контексте Биоэтики, Философии и Медицины», т. 2, Кишинев, Молдова, 2012, стр. 14-20.
14. Давтян С., Арутюнян М., Экологическое образование как механизм формирования экологической культуры общества (опыт социологического исследования) // В материалах 12-ой Межд. Науч. конференции «Сахаровские чтения», 2012 года: Экологические проблемы 21–го века, Минск, Республика Белорусь, 2012, стр. 306-308.
15. Давтян С., Арутюнян М., Отчуждение общества: от диагноза к действию // В сборнике научных статей «Стратегия выживания в контексте Биоэтики, Философии и Медицины», Кишнев, Молдова, 2013, т. 3, стр. 114-118.
16. Давтян С., Биоэтика Учебное пособие // Ереван, РА, Изд. ЕГМУ, 2013, 257 стр.
17. Давтян С.А., Казарян К.Т., Хачатрян М.А. Биоэтика и медицинское право // «Биоэтика» Федеральный научно-практический журнал, Волгоград, РФ, 1/15, 2015, стр. 14-18.
18. Davtyan S., The Traditions, Customs, Mentality, Culture and Problem of Euthanasia in Armenia // 2nd International Conference on Ethics Education in Medical Schools. Program and Book of Abstracts. Eilat, Israel, 2002, p. 34.
19. Davtyan S., Aslanyan G., "Ethical Review System for Biomedical Research in the Republic of Armenia (Historical and Cultural Background, Legal Regulations, Education in Bioethics, Perspectives and forms of International Cooperation)" // In Ethical Review of Biomedical Research in CIS Countries (Social and Cultural Aspects), Saint Petersburg, Russia, 2007, pp. 89-104.
20. Davtyan S., Using Literature and Theatre for Education of Issues of Involuntary Abortion, Sterilization and Hospitalization // Bioethics Education: Contents, Methods, Trends. Zefat, Israel, 2010, p. 34.
21. Davtyan S., Methodology of Bioethics approbation in YSMU // In the New Armenian Medical Journal, Vol. 5, N3. Yerevan, RA, September, 2011, pp. 62-71, 85.
22. Davtyan S., Basic Educational Program on Bioethics of UNESCO (Armenian Experience) // In the book of Abstracts. Singapore, Singapore, 2011, p. 32.

23. Davtyan S., The Use Of Works of Medieval Armenian Thinkers In Theaching Bioethics: “Narek” As a Remedy // In the Book of Abstracts: Bioethics Education: Contents, Methods, Trends, Tiberias, Israel, 2012, p. 52-53.
24. Davtyan S., Experimental Course of Bioethics Upon The Bioethics Core Curriculum Of UNESCO: *Methodology and results of Investigation* // Leading article in International Journal “Medicine and Law” V.31, #4, Haifa, Israel, December 2012, pp. 495-513.
25. Davtyan S., Bioethics: Word Curing and Music Therapy // In the Book of Abstracts of the UNESCO Chair in Bioethics 9th World Conference on Bioethics, Medical Ethics and Health Law. Naples, Italy, 2013, p.70.
26. Davtyan S., Bioethics Handout // Yerevan, RA, 2013, 189p.
27. Davtyan S., Balayan B., Nemishalyan R., Ethics Committees and GCP and GCP Rules (Armenian Experience) // In the UNESCO Chair in Bioethics 9th World Conference on Bioethics, Medical Ethics and Health Law. Naples, Italy, 2013, p. 180.
28. Davtyan S., Khachatryan M., Johrian A., Gazaryan K., Mkhiar Gosh's Medieval Law Code and the Implications for Armenian Communities Abroad // Medicine and Law Int. Journal, Haifa, Israel, 2014, vol. 33 Number 2, July, pp. 41-48.
29. Davtyan S., Johrian A., Harutiunyan M., Armenian Alienated Society // In the Survival Strategy in Terms of Bioethics Philosophy and Medicine. Collection of Scientific articles with International participation. V. 4/20, Chisinau, Moldova, 2014, CEP “Medicine”, pp. 178-181.
30. Davtyan S., Ghazaryan K., Problems and Perspectives in Bioethics Education in the CIS Countries (Socio-Philosophical Analysis) // In the Book of the Abstracts of the UNESCO Chair in Bioethics 10th World Conference on Bioethics, Medical Ethics and Health Law. Jerusalem, Israel, 2015, p. 29.
31. Davtyan S., Kchachatryan M., Ghazaryan K., Johrian A., Narekatsi in Frames of Bioethics Curriculum // In the “Book of Abstracs” of UNESCO Chair in Bioethics 11-th World Conference: Bioethics, Medical Ethics and Health Law. Naples, Italy, 2015, p. 51.
32. Davtyan S. Armenian Medieval Philosophy and Medical Science: Narek as a Remedy. Wisdom 2 (5), Yerevan, RA, 2015, pp. 61-66.
33. Davtyan S. Khachatryan M. Personal Identity. «Биоэтика» Федеральный научно-практический журнал, Волгоград, РФ, 2016, стр. 17-23.

Давтян Сусанна Амбарцумовна

ФИЛОСОФСКИЙ АНАЛИЗ ПРОБЛЕМ БИОЭТИКИ

Диссертация на соискание учёной степени доктора философских наук по специальности 09.00.01 - "Теоретическая философия, логика, философия науки".

Защита состоится 28 июня 2016г., в 13^{00} на заседании специализированного совета Психологии и философии 064 ВАК по присуждению ученой степени при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Представленная к защите докторская диссертация – первая работа в Республике Армения, в которой с философских позиций анализируются проблемы биоэтики. Диссертационная работа нацелена на теоретико-методологическое обоснование познавательной специфики «философии биоэтики» как самостоятельной философской дисциплины.

В рамках диссертационного исследования анализируются следующие аспекты биоэтики: биоэтика как диолог, биоэтика как культурный и этический феномен, биоэтика как практическая философия.

Диссертация состоит из введения, 4 глав с подглавами, заключения и списка литературы. В ней сформулированы выводы, полученные в результате философского анализа основных проблем биоэтики как специфической междисциплинарной области современного научного знания:

- На основе исследования становления и развития биоэтики обосновано положение, согласно которому императив выживания человечества, актуализированный сегодня, требует качественно нового подхода к сложным, глобальным, многоаспектным проблемам современности. Одним из таких подходов является биоэтика. Возникновение биоэтики как области междисциплинарного научного знания детерминировано наличием общественного запроса о пределах возможного вмешательства науки и техники со всеми разработанными на их основе технологическими возможностями, в телесную и психическую жизнь человека.

- В диссертации обоснован необходимость междисциплинарного исследования в качестве наиболее оптимального дискурса при анализе биоэтической проблематики. А потому проблемное поле биоэтики составляют научные и морально-философские проблемы контрацепции и новых репродуктивных технологий, проведения научных экспериментов на человеке, геронтологии и "практического бессмертия", изучения эвтаназии, т.е. отношения к больным, находящимся в "пограничной ситуации", получения информированного согласия и обеспечения прав пациентов, включая проблемы геномных исследований и манипуляций, а также проблемы генетически модифицированных продуктов, трансплантологии, коммерциализации медицины и "справедливости" в здравоохранении и др.

- Одним из выводов исследования является тезис о том, что биоэтика, как область междисциплинарного и комплексного знания, является новейшим направлением в

философском осмыслении жизни, связанным с разработкой гуманистической проблематики и, в первую очередь, путей изменения образа науки, ее идеалов и норм. Основу получившего свое развитие в рамках биоэтики нового гуманизма, составляют такие новые характеристики, как глобальность мышления, стремление к справедливости, неприятие насилия и др. Императивом для исследовательской деятельности ученого и всего массива институционализированного научного знания является оценка этических последствий научных открытий и технологий. Для современной стадии развития науки важен не только теоретический потенциал этноса, но и содержащиеся в нем стимулы практического использования. В работе проанализированы как международные декларации, конвенции, документы по биоэтике, так и законодательные акты, принятые Национальным Собранием Республики Армения. В работе приводятся также соображения и мысли средневековых армянских мыслителей (Григора Нарекаци, Давида Непобедимого, Мхитара Гоша, Григора Татеваци и др.). Теоретический материал оснащен результатами социологических исследований, проведенных совместно с Институтом Философии, Права и Социологии НАН РА.

- На основе анализа аксиологических аспектов исследуемой проблематики, выводится, что становление биоэтики как новой области междисциплинарного научного знания связано с критическим, философским переосмыслением общечеловеческих и национальных ценностей. Эти ценности рассматриваются как реально функционирующие морально-этические принципы различных философских парадигм гуманизма. Философский дискурс раскрывает сущность специфических требований морали и права в практической медицине. Становление биоэтики в Республике Армения обусловлено социо-культурными особенностями армянского общества. Синтез отечественных философских, богословских христианских традиций и достижений западной биоэтики позволяет выявить возможности дальнейшей гуманизации медицины.

- Сегодня в Армении назрела настоятельная необходимость именно научно-философского осмысления духовно-нравственных проблем биоэтики. В работе подчеркивается, что специфика биоэтики заключается в преимущественном внимании к тем граням биомедицинских наук и практической деятельности, их представителей.

- Анализ проблем эвтаназии наводит на мысль о том, что эвтаназия – это не выбор между смертью и жизнью (в таком случае она, безусловно, должна быть запрещена). Эвтаназия – это выбор между смертью и смертью: смертью мучительной и смертью без страданий. Формулируется и обосновывается мысль о том, что при решении проблем, связанных с эвтаназией, необходимо учитывать не только этнокультурные особенности народа, но и социально-экономические условия его жизни. Проблема эвтаназии все еще остается дискуссионной. Примечательно, что в РА действует статья, принятая НС РА запрещающая ускорение смерти больного (1996г.). В работе проанализированы труды средневековых армянских мыслителей (Нерсес Великий, Давид Непобедимый, Мхитар Гош, Смбат Гундстабл, Григор Татеваци и др.), в которых проявляется ярко выраженное негативное отношение к этой проблеме.

Davtyan Susanna Hambartsum

THE PHILOSOPHICAL ANALYSIS OF BIOETHICAL ISSUES

Thesis for the scientific degree of Doctor of Philosophical Scienes by specialty 09.00.01 - "Theoretical Philosophy, Logic, philosophy of science".

The defense of the thesis will be held on June 28, 2016, at 13.00, at the session 064 professional commission granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Address: Armenia, Yerevan 0010, str. Tigran Mets 17.

SUMMARY

The presented doctoral thesis is the first dissertation in the Republic of Armenia in which the problems of Bioethics are analysed from the philosophical point of view. The milestone research of the given doctoral dissertation is to well ground the right of existence of the independent philosophical discipline "Philosophy of Bioethics" with its specific methodological functions both for the whole philosophy and the theories of Bioethics as well.

In the frame of the given dissertation philosophical analysis includes the following aspects of investigation: bioethics as a dialogue, bioethics as a cultural and ethical phenomenon, bioethics as a practical philosophy.

The philosophical analysis of Bioethics problems is not only important by itself, but also is decisive for versatile studies and is an efficient solution given to many scientific and practical problems.

The presented to defend doctoral thesis consists of an introduction, four chapters with subchapters, conclusion and bibliography.

On the base of philosophical investigation of bioethics' coming to being process there is a percept, as per which an urgent imperative of mankind rescue, needs a qualitatively new approach to the complex, global and all-around problems of modern world. One of such approaches is Bioethics. Emergence of Bioethics as a sphere of interdisciplinar scientific knowledge is predetermined by a social request of realizing of interference limits of the science and new technologies into the somatic and spiritual life of a human being.

In the given scientific work there is an asserted choice of interdisciplinar study discourse as the most optimal one in the bioethics problems' analysis. That is why one of the most important yields of this study is a conclusion about Bioethics to be the newest direction in the philosophical perceiving of life, connected with humanistic problems elaboration, and first of all, how to change ideals and norms of science. The pivotal base of new humanism developed in terms of Bioethics is a complex of characteristic features, such as global thinking, tends to justice, crime denying, etc. An imperative for scientific researches is evolution of ethical consequences of scientific discoveries and technologies.

The theoretical material is enriched by the results of sociological surveys conducted among the students and University professors, provided in collaboration

with the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA. This work also includes issues of the applied ethics, case – studies, collected from all over the world and their ethical analysis.

The international and Armenian legal acts on Bioethics are analysed as well. It comprises the thoughts and ideas of Medieval Armenian thinkers (Gregor of Narek, Davit the Invincible, Mkhitar Gosh, Gregor of Tatev etc.).

Based on the axiological aspects of the investigated problems we conclude that emerging of Bioethics is going along with the critical, philosophical reasoning and reconsiderating of the humanistic and national values, which are observed as real functioning philosophical paradigms of humanism.

The philosophical discourse unveil an essence of specific requirements of the moral and right in practical medicine, enables comprehension of the physicians' activity in unity with the moral traditions. One of conclusions of investigation is in crucial importance of understanding of spiritual-moral problems of Bioethics, namely in the scientific-philosophical way. Bioethics as a moral sphere of medical science and practice today has an extreme necessity in philosophical realizing of world-view and new medical "technologies" of people treatment.

The Bioethics development in Armenia is conditioned by the socio-cultural peculiarities of the Armenian society. Synthesis of the paternal, philosophical, theological Christian traditions and the western Bioethics achievements enables to reveal the medicine's further humanization opportunities.

Nowdays in Armenia is a anucral necessity of the Bioethics problems spiritual-moral realization specifically in a philosophical way.

It is underlined also that specificity of Bioethics is in predominant attention to those edges of the biomedicine and the practical activity, which tend to radical changes of the human nature or the main aspects of his life activity.

Philosophical analysis of the Euthanasia problem leads to its sens not only as an option between death and life, but between death and death: a death with pain and a death without suffering. Facing the problems connected with euthanasia rushes into the mentality's, traditions', habits' and other ethno-cultural peculiarities of the nation, as well the socio-economic condition. Referring to Euthanasia the ideas of medieval Armenian thinkers are cited in the work, which have negative opinion about Euthanasia phenomenon in general.

The palliative course of medicine is the new aspect of medicine for Armenia, which needs help and sponsorship. It is not accepted as a specialized realm of activity yet. Thus, it is too soon to talk about the system of palliative medicine in RA.

Analyzing the hospice practice we conclude that philosophy of case approves new ethical approach in help provision to a dying one. Development of the palliative care is an alternative option to Euthanasia, which is widely applied in special medical facilities to provide an effective help and relief to a dying one to ensure his death with "dignity", as realization of ideas of Francis Bacon, cited almost 400 years ago.